Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13326

Սեղան Նյութի
1901
Կերակրատեսակներ

891.99
Ս-29

Переплетно-Галантерейная
МАСТЕРСКАЯ
Е. В. Черн. Гравинская
Таможенная ул. № 7

891.99
Ս-39
№ 9335

ԱՅՈՒՂ ԱՋԱՏԻ

ՀԵՔԻԱԹԸ

ТИФЛИССКАГО СОКОЛЬНИЧЕСКАГО
БИБЛІОТЕКА
1002
4935

Աշխատասիրեց

ԳԷՈՐԳ ԹՈՐՈՍԵԱՆ ՄԱՍՅԱՆԻՍԵԱՆՑ

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպ. Ա. Մալխասեանցի ☆ Тип. А. Малхасянца
1901

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Г. А. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

5295

Дозволено цензурою. Тифлисъ, 8 Мая 1901 года.

2004

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի նկատի առնելով, որ հետզհետէ ընթերցասիրութիւնը տարածվում է մեր ժողովրդի ստորին դասակարգի մէջ, շնորհիւ հեքեաթների և նրանց նման գրուածքների, որոնք շատ մօտ են ժողովրդի սրտին և հոգուն, ըստ որում, սկիզբն են առնում նորա բուն կեանքից, ուստի թոյլ եմ տալիս ինձ վստահանալ և ընթերցասիրութեան գանձանակի մէջ գցել և իմ փոքրիկ գրականական լուման.—«Աշուղ Ազատի հէքեաթը» վերնագրով գրքոյկը, որը նկարագրելով մի տոհմի անցեալը հանդիսանում է իբրև իրականութեան պատկեր:

Անշուշտ, սոյն աշխատութիւնը ունի իւր բազմակողմանի թերութիւնները, բայց և այնպէս այդ թերութիւններով հանդերձ թոյլ ենք տալիս մեզ հրապարակ դուրս գալ, առաջնորդուելով ժողովրդական ընթերցանութեան վեհ և սուրբ գաղափարով. որի հիման վերայ էլ խնդրում ենք

բարի ընթերցողների ներողամտութիւնը դէպի սոյն գրքոյկի պակասութիւնները, աչքի առաջ ունենալով, որ այս մեր գրական աշխատութեան առաջին փորձն է։

Գեորգ Թորոսեան Մաջլումեանց



ԱՇՈՒՂ ԱԶԱՏԻ ՀԵՔԻԱԹԸ

ԺԹ դարի սկզբներում Ղարաբաղցի Մելիք-Մաջլումի և իւր եղբայր Մելիք-Հայկազունու մեծ ծագեց դժտութիւն և վերջինը վեր առնելով իւր ընտանիքը և մի քանի տուն հայ ժողովուրդ, գընաց Պարսից Աղա-Մահմադ Շահի մօտ և խնդրեց նորանից մի ընակութեան տեղ։ Շահը նորան շնորհեց Շաւարշան գաւառի Կարմիր-Կոնդ գիւղը։ Մելիք-Հայկազունին այնտեղ մի քանի տարի խաղաղ կեանք անցկացրեց և ունեցաւ մի արու զաւակ, որին կոչեց իւր եղբօր անունով—Մաջլում, որպէս զի նախկին անունը չը կորչի։

Երբոր Մաջլումը եղաւ տասն տարեկան, հայրը նորան տուեց ուսման, որը սկսեց շատ յաջող սովորել և հինգ տարուան ընթացքում աւարտեց իր ուսումը. այնուհետև իրեն նուիրեց որսորդական կեանքի։ Նա հաւաքեց մի քանի երիգասարդներ և նրանց հետ սկսեց շրջել Շաւարշանի խոր-

քերում և զանազան քաջութիւններ անել, որտեղ յաճախ իր խմբով պատահում էր քիւրդական աւազակախմբերի և շատ յաջող կերպով ցրվում էր նրանց։ Նամանաւանդ երբ լիշում էր այդ վայրենի ցեղերի ոճրագործութիւնները իր պապերի օրով և նրանց մէջ տեղի ունեցած արկածների մասին, աւելի ևս զինվում էր և լցվում անպատմելի վրէժխնդրութեան ոգով. նա շարունակ մտածում էր հետզհետէ աւելի ու աւելի սուրարացնել իր խումբը և վերջնականապէս դուրս վանել Շաւարշանի սահմաններից իւր հակառակորդ բարբարոս հրոսակներին։ Եւ լիրաւի, նորա նախամտածմունքները արդէն իրագործուելու վերայ էին, երբ անակնուն-ելի կերպով անգութ ճակատագիրը յեղաշրջեց նորա բոլոր կազմած ծրագրները և զրկեց նորան իր թանկագին հօրից։ Մելիք-Հայկազունին մահացաւ։ Մաջլումը շատ մեծ շուքով թաղեց իւր հօրը և շատ փառաւոր պատարագ և հոգեհանգիստ անել տուեց, որին ներկայ էին բոլոր ժողովուրդը։ Պատարագին այնպիսի պատարաստութիւն էր տեսնուած՝ որի նմանը երբէք եղած չէր։

Դորանից յետոյ ժողովուրդը Մաջլումին ընդունեց իբրև Մելիք։ Մելիք-Մաջլումը մի տարի սուգ պահելուց յետոյ ամուսնացաւ մի հայ օրիորդի հետ և շատ մեծ հանդէսով պսակուեց։

Մի քանի տարուց յետոյ նա ունեցաւ մի արու զաւակ, որին մկրտելով Սուրբ Թէոդորոսի տօնին, անուանեց Թորոս։ Մելիք-Մաջլումը մի քանի տարի բաղդաւոր ու երջանիկ կեանք վարելուց, յետոյ հետզհետէ ընկաւ դժբաղդութեան մէջ. ժամանակը փոխուեց դէպի վատը։ Օսմանեան կուսակալները սկսեցին քիւրդերի միջոցաւ ասպատակութիւններ կատարել նրանց սահմաններում և տեսակ տեսակ անտանելի ոճրագործութիւններով ըսպառել հայ տարրը։ Մելիք-Մաջլումը լաւ համոզուելով՝ որ այլ ևս անզօր է պաշտպանուել այդ արիւնարբու ցեղերից և լսելով՝ որ այդ ժամանակ ռուսահպատակ հայ ժողովուրդը շատ լաւ վիճակի մէջ է գտնուում, որոշեց անց կենալ դէպի Ռուսաստան, այդպէս էլ արեց։ Անպիտան քրդերը լսելով այդ բանը, զինուեցին երեք հարիւրի չափ մարդիկ և շտապեցին դէպի ռուսաստանի ճանապարհը և սկսեցին հսկել, որպէսզի յաջողեցնեն արգելել և բռնել կամ սպանել Մելիք-Մաջլումին։

Վերջապէս վերջինը իւր խմբով պատահեց նրանց և երկու կողմից սկսուեց սաստիկ պատերազմ. շատ վաղուց էր, որ Մելիք-Մաջլումի արիւնը չէր շարժուել. նա քաջացաւ և որպէս մի առիւծ՝ գոռաց և արագաթռիչ նժոյգի վերայ նստած՝ նիզակը ճօճացնելով օդի մէջ, յարձակուեց քրդե-

րի վերայ և աջ ու ձախ գետին տապալելով նո-
րանց, անցաւ բանակից դուրս, բայց ինչ կարող
էր անել արդեօք, երբ իր մարդկանց երկուերորդ
մասը արդէն կոտորուած էին։ Նա տեսաւ որ այլ
ևս անհնարին է ընդդիմանալ, հաղիւ առաւ իւր
կինը և որդին սլացաւ դէպի Ռուսաստան։ Մելիքը
թէև ազատեց իւր ընտանեաց կեանքը, բայց զրկուեց
իւր բոլոր ստացուածքից, թանկագին իրէղէններից
և որ ամենագլխաւորն է, իւր ազատութեան թըղ-
թից, որը տուել էր նորան սլարսից Շահը։ Մելիք
Մաջլումը անցաւ ռուսաց սահմանը և հասնելով
Շիրակայ գաշտը բնակուեց Ղարաքիլիսայ գիւղում։
Ղարաքիլիսեցիք տեսնելով նորա բարեբարոյ վար-
քը և պատուաւոր դիրքը, նորան ընդունեցին ի շա-
բրը մշտաբնակների և տուեցին մի քանի կտոր
հող վար ու ցանքի համար. այդտեղ Մելիք-Մաջլումը
ապրեց միքանի տարի խաղաղ կերպով, այնուհետև
մտածեց գնալ Պարսկաստան և Շահից ստանալ իւր
ազատութեան թուղթը, բայց նորան արգելք եղաւ
Հասան-Խանի ասպատակութիւնը և յանկարծակի
յարձակումը դէպի Շիրակ։

Հասան-Խանը իւր աւազակային գործողութիւն-
ներով սարսափ էր տարածել երկրի բոլոր կողմե-
րը և հէնց որ իմացվեց նորա դէպի Շիրակ գալը՝
բոլոր գիւղացիք շտապեցին պատսպարաններ գտնել

քարանձաւների և անառիկ լեռների մէջ և այլևայլ
ամրութիւններում. գիւղացիներից նրանք, որոնք
հնարաւորութիւն չունէին փախուստ տալ հեռա-
ւոր տեղեր, ամրացան եկեղեցիներում. այսպէս
եղաւ և Ղարաքիլիսայ գիւղում։ Հասան-Խանի
մարդիկը հեղեղի նման լցուեցին գիւղը և
անխնայ կերպով ասպատակեցին ու կոտորեցին
բոլոր անպաշտպան մարդկանց, յետոյ շրջապա-
տեցին եկեղեցին, դռները կոտրեցին ներս մտան
և սկսեցին անխնայ կոտորած անել և յետոյ
հրդեհել եկեղեցին։ Կանանց և երեխայոց լաց ու
կոծի ձայները երկինք էր բարձրանում և լսողնե-
րի սիրտն ու հոգին մորմոքում։

Այս սարսափելի կոտորածից ազատ մնաց Մե-
լիք-Մաջլումը իր ընտանիքով, որովհետև սկզբից
կարողացել էր ձեռք բերել անառիկ ապաստանա-
բան։ Երբոր Հասան-Խանի սարսափը անցկացաւ,
Մելիք-Մաջլումը եկաւ իւր ընտանիքով բնակուեց
Հայր-Ցարթիկ գիւղը Ղահրաման Սուլթանի մօտ։
Ղահրաման- Սուլթանը հարց ու փորձ անելով և
իմանալով նորա ով և ում որդի լինելը՝ նորան բնա-
կութեան տեղ նշանակեց Մուղերիս գիւղը և պա-
տուիրեց այնուհետև անուանել այդ գիւղը Սուլ-
թանի-գիւղ որ այժմ կոչվում է Պարոնի գիւղ կամ
Սուլթանի Պարնի-գիւղ։ Մելիք-Մաջլումը հաւաքե-

լով մի քանի տուն հայ ժողովուրդ՝ հաստատուեց այդ գիւղում։ Նա երեք չորս տարի հանգիստ ու խաղաղ կեանք վարելուց յետոյ, կրկին մտադրուեց գնալ Պարսկաստան Շահի մօտ և հաստատել տալ իր մելիքութիւնը, բայց այդ բանը չըյաջողուեց նորան, որովհետև մահը վրա հասաւ և վաղճանուեց յիսուն տարեկան հասակում։

Նորա որդի խեղճ Թորոսը դեռ քսան տարեկան հասակում ընկաւ ընտանեաց ծանր հոգսի տակ. Նորա տխրութեանը չափ չ'կար, անդադար զօր և գիշեր լաց էր լինում և իր վիճակը մտաբերելով՝ յուսահատութիւնից քիչ էր մնում խելագարուէր։ Վերջապէս մի քանի ժամանակից յետոյ ինքն իրեն մտածելով՝ ուշքի եկաւ որ ի գուր է բոլոր տխրութիւնը, որովհետև մահը բնական բան է, ուստի սկսեց ամուսնութեան պատրաստութիւններ տեսնել, իւր մտերիմների միջնորդութեամբ կարողացաւ պսակուել մի լաւ օրիորդի վրայ, որը կատարելապէս մխիթարութիւն պատճառեց նրան իւր հօր մահուանից յետոյ։

Նրանց ամուսնական կեանքը իսկապէս նախանձելի էր։ Թորոսը ունեցաւ երեք որդի. առաջին որդուն անուանեց Եղիշէ, երկրորդին Իսկեանդար, իսկ երրորդին մկրտութեան ժամանակ Ղահրաման-Սուլթանը ներկայ լինելով՝ իւր մեռած որդու անունով կոչեց Յովհաննէս։

Թորոսի որդիքը մէկը միւսից լաւ էին, նրանք Աստուծոյ տնօրէնութեամբ մեծացան, առոյգացան և իրանց ծառայութեամբ իրանց հօրը մեծ ուրախութիւն ու մխիթարութիւն պատճառեցին։ Մեծ որդին Եղիշէն կառավարում էր տունը, որպէս անմիջական յաջորդ իւր հօրը, երկրորդ որդին Իսկեանդարը արածեցնում էր իրենց ոչխարների հօտը Արագած լեռան կանաչազարդ լանջերում, իսկ Յովհաննէսը որսորդութեամբ էր պարապում. միշտ հրացանը ուսին շրջում էր Արագածի վրայ և անվեհեր կերպով մտնում էր այդ ամեհի լեռան խոր-խոր ձորերում ու քարանձաւներում և յարձակվում էր նորանցում թագկացած գազանների վրայ և առանց սխալուելու գնդակահար անում նրանց։ Նրանց տունը լիքն էր վայրենի արջերի մորթիներով, որոնք զոհ էին եղել նորա հրացանին։

Թորոսը իւր 25 ամեայ մեծ որդի Եղիշէին մեծ հանդէսով պսակեց և վերջնականապէս ինքը հրաժարուեց տան կառավարութիւնից, տան աւագութիւնը յանձնելով նորան. դորանից յետոյ դարձեալ միքանի տարի ամենաերջանիկ կեանք անցկացնելուց յետոյ կնքեց իր մահկանացուն։

Հաւաքուեցան բոլոր որդիքն և շատ փառաւոր հանդէսով թաղեցին իրանց հօրը և մի տարի սուգ պահեցին նորա մահուան համար։

Աստուած Եղիշէին մի որդի պարգևեց, որի անունը կոչեց Սուրէն. նորածին Սուրէնը կարծես մոռացնել տուեց Թորոսին. Եղիշէն և իւր եղբայրները կատարեալ մխիթարվում էին այդ նորաբողբոջ ծաղիկով։ Սուրէնը երբ եղաւ երեք տարեկան, նորա գեղեցկութեանը չափ չկար, նա իւր տարիքին նայելով անհամեմատ առոյգ էր, կարծես տաս տարեկան լինէր, հաստաբազուկ, երկայնավիզ, ճակատը լայն, աչքերը փայլուն որպէս երկու հրային աստղեր, այտերը վարդագոյն, հասակը վայելուչ, միով բանիւ նորան տեսնողը միանգամայն զարմանում էր ու ինքն իրան ասում.—այսպիսի գեղեցկութիւն ոչ եղել է և ոչ էլ պիտի լինի. Սուրէնը այդ գեղեցկութեան հետ միասին ունէր և վերին աստիճանի քարցրախօս լեզու։ Երբոր եղաւ ութ տարեկան, հայրը նորան տուեց ուսման Ս. Էջմիածնում։ Նա իւր անսովոր ընդունակութեամբ զարմացնում էր իւր ուսուցիչներին, որոնք խոստովանում էին, որ այդպէս ընդունակ ու գեղեցիկ տղայ երբէք տեսած չեն, որի պատճառաւ նորանք Սուրէնին անուանեցին Դէշէշկ—Սուրէն. Գեղեցիկ Սուրէնը իւր ուսումը շարունակեց մինչև տասն և հինգ տարեկան հասակը, այսինքն մինչև այն ժամանակ, երբ Խրիմեան Հայրիկը ընտրվում էր Կաթուղիկոս:

Հայրիկի օծման ժամանակ Սուրէնը դեռ Էջմիածնումն էր. նա տեսաւ, որ օծման համար մեծ պատրաստութիւններ են տեսնվում, գրեց իւր հօրը որ արժէ ներկայ լինել այդպիսի շքեղ ու սուրբ հանդէսին։ Եւ յիրաւի աշխարհի ամեն ծայրերից շտապում էին անթիւ ջերմեռանդ հայեր ներկայ լինելու իրենց սիրելի Հայրիկի Օծմանը, նրանց թվում և շտապեց գալ Էջմիածին Սուրէնի հայր Եղիշէն իւր կին Հռիփսիմէի հետ, բաւական պատրաստութեամբ հանդերձ, և հիւր իջաւ Ղևոնդ Ղամազեանի տունը։ Երեկոյ էր. Ղևոնդը երբ իմացաւ որ գեղեցիկ—Սուրէնի հայրն ու մայրն են, շատ ուրախացաւ և մի փառաւոր ընթրիք պատրաստեց նրանց համար։ Ընթրիքը շատ զուարճալի կերպով ընդունելուց յետոյ հանգիստ քնեցին։

Հետևեալ առաւօտեան վաղ վեր կացան և նախաճաշելուց յետոյ գնացին վանքը, որտեղ պէտք է հանդիսատես լինէին օծմանը. Օծման հանդէսը աննկարագրելի էր. ժողովրդի մեծ բազմութեան պատճառով Օծումը կատարուեց սալայատակի վերայ, որտեղ պատրաստուած էր յատուկ տախտակամած. Օծման խորհուրդը կատարելուց յետոյ, տասնեակ հազարաւոր ժողովրդի կեցցէների ձայնը թընդացնում էր օդը։ Երբ ամեն ինչ վերջացաւ և ժողովուրդը սկսեց հեռանալ, Ղևոնդն էլ վեր

առաւ իւր հիւրերին, որոնց հետ էր և Գեղեցիկ— Սուրէնը, և եկան տուն։ Ճանապարհին Ղևոնդը մտածում էր թէ արդեօք կլինի, որ Սուրէնը իրեն փեսայ լինի. իսկ Եղիշէն էլ մտածում էր որ առաջարկութիւն անէ Ղևոնդին նորա Արուսեակ աղջիկը առնելու իւր որդի Սուրէնին հարսնութեան։

Մինչդեռ այդ երկուսը փոխադարձաբար այդ խորհուրդը տածում էին իրանց սրտերում և մտախոհ կերպով առաջ գնում, ճանապարհին պատահողներն էլ իրանց կողմից երբ տեսնում էին Սուրէնին և Արուսեակին՝ ասում էին. եթէ այդ տղան և աղջիկը միմեանց հետ բարեկամութիւն չունին՝ արժանի են միմեանց առնելու։—

Երբոր տուն հասան, ճաշը արդէն պատրաստ էր և նստեցին ճաշելու. պատրաստութիւնը շատ շքեղ էր, տեսակ տեսակ կերակրեղէններին. մրգերին և խմիչքներին թիւ չկար. վերջիններիմէջ փայլում էր հայաստանի տնական գինին, որից անընդհատ բազմաթիւ կենացներ վայելելով՝ Եղիշէն ու Ղևոնդը հասած էին ուրախութեան ամենաբարձր աստիճանին. հենց այդ ամենալաւ տրամադրութեան ժամանակ Ղևոնդը վերառաւ գինով լի բաժակը՝ և խօսեց այսպէս.— Ո՛վ ստեղծող Տէր, Դու տաս մեզ այնպիսի սէր, որ մինչև ցմահ միմիանց չմոռանանք և ինչ մարդ էլ որ ինչ բարի

նպատակ ունի իւր սրտում՝ Դու բարին կատարես.» և դատարկեց բաժակը։ Եղիշէն իսկոյն հասկացաւ այդ խօսքերի միտքը և ինքն էլ առնելով բաժակը ասաց.—«Պատուելի եղբայր, կեցցես դու քո առաջարկութեամբ, ես արդէն մտածում է ի քո դուստր Արուսեակին խնդրել իմ որդուս համար, ուրեմն թող ամենաբարի Աստուածը կատարէ մեր երկուսի խորհուրդը—և դատարկեց բաժակը։ Վերջապէս այս հարկի առթիւ միմեանց հետ բաւական երկար խօսելուց և բարեմաղթելուց յետոյ համաձայնութիւն կայացաւ վերջնական կերպով. Եղիշէն մի մատանի նշան տուեց Արուսեակին և նշանի սկզբնական արարողութիւնը կատարուեց. կանչեցին ծխատէր քահանային և նշանադրութիւնը օրհնել տալով սկսեցին աւելի ևս ուրախանալ, երգել, և պարել։ Նրանց ուրախութիւնը տևեց մինչև կէս գիշեր, յետոյ հաղիւ հանգստացան։ Հետևեալ առաւօտ շտապեցին եկեղեցի, աղօթելուց յետոյ վերադարձան տուն և նորից սկսեցին շարունակել իրանց ուրախութիւնը մինչև ճաշ. ճաշի ժամանակ հարսանեաց մասին խօսակցութիւն և փոխադարձ առաջարկութիւններ տեղի ունեցան. վերջապէս որոշուեց, որ Եղիշէն տուն վերադառնալուն պէս սկսէ պատրաստութիւններ տեսնել հարսանեաց համար. նոյնը անելու էր և Ղևոնդը։ Այդ օրն էլ շատ

փառաւոր ուրախութիւն անելուց յետոյ հետևեալ առաւօտեան Եղիշէն իւր ընտանեաց հետ ճանապարհ ընկաւ դէպի իւր տունը, նախապէս շնորհակալութիւն տալով իւր նոր բարեկամ Ղևոնդ Ղամագեանին, նորա զարմանալի հիւրասիրութեան համար։

Եղիշէն տուն հասնելով կանչեց իւր բոլոր բարեկամներին ու ազգականներին և յայտնեց նրանց գործի եղելութիւնը, որոնք լսելով չափազանց ուրախացան և սկսեցին խնջոյքներ կազմել և միմեանց աչքալոյս տալ։ Շատ չանցաւ այդ օրից Սուրէնը աւարտեց իւր ուսման ընթացքը և վերադարձաւ հայրենիք։ Եղիշէն արդէն պատրաստ էր հարսանեաց համար. նա մի պատգամաւոր ուղարկեց Էջմիածին յայտնելու Ղևոնդին, որ գալու է. Ղևոնդը պատասխանեց, որ կարող է գալ։ Եղիշէն Ղամագեանի համաձայնութիւնը ստանալով, հրաւիրեց իւր բարեկամներին ու ազգականներին, նոյնպէս խաչ-քաւորին, և նրանց յայտնեց հարսանեաց մասին, սկսեցին պատրաստուել. միասին փառաւոր նախաճաշելուց և կենացների բաժակներ դատարկելուց յետոյ Աստուած կանչելով ճանապարհ ընկան դէպի սուրբ Էջմիածին. օրը մի իջևան գնալով երեք օրից յետոյ հասան այնտեղ։ Ղևոնդը շատ սիրով ընդունեց և նստացրեց սենեակի մի

կողմը, իսկ նրանց հանդէպը նստացրեց իւր տեղացի բարեկամներին և սկսուեց ուրախութիւնը, որը տևեց մինչև կէս գիշեր, առաջարկութիւններին և բաժակներին թիւ ու համար չկար։ Հետևեալ առաւօտեան կատարուեց հարսանեաց սկզբնական խորհուրդը, այն է՝ քահանան օրհնեց Արուսեակի պսակի հանդերձները, երբոր ծիսակատարութիւնը վերջացաւ, Ղևոնդը առաւ գինու բաժակը և արեց հետևեալ բարեմաղթութիւնը.—«սիրելի հանդիսականներ, դուք գիտէք, որ ես էլ ուրիշ զաւակ չունիմ բացի Արուսեակը, որովհետև այսպէս է, ուրեմն ես էլ իմ յօժար կամքով իմ բոլոր կարողութիւնը կտակում եմ իմ փեսին. իմ մահից յետոյ թող նա տիրէ բոլոր իմ ունեցածներին, ուրեմն Աստուած թող օրհնէ, իմ երկու զաւակներիս, Սուրէնին, և Արուսեակինս։» Ժողովուրդը այս խօսքերը որ լսեց շատ հաւանեց՝ և օրհնելով նորան՝ բոլորն էլ նրա կենացը և իր որդու կենացը խմեցին։ Արուսեակը արդէն հարսնութեան շորերը հագած կանգնել էր, այս բարեմաղթութիւններից յետոյ եկաւ իւր ծնողաց ձեռքը համբուրեց և իւր վերջին մնաս բարովն ասաց իւր ազգականներին։ Շատ սրտաճմլիկ տեսարան էին ներկայացնում նրանց հրաժեշտի ողջոյնները. աննկարագրելի էր Արուսեակի ծնողաց վիշտը, որ պէտք է այնուհետև

1002
7951
Հ.Ս.Խ.Հ. ԳԻՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

զրկուէին իրանց միակ դստեր տեսութիւնից ու մխիթարութիւնից. նրանք լայ էին լինում անմխիթար և յուսահատ կերպով։ Վերջապէս մօտեցաւ նրանց Եղիշէն և ասաց. սիրելի խնամիքս, անգին բարեկամներս, դուք ի զուր մի վշտացնէք ձեր ուրախ սիրտը և մի վնասէք ձեր թանկագին աչքերը. որովհետև դուք ո՛չ թէ ձեր աղջկան կորցրիք, այլ նորա հետ ունեցաք և մի տղայ, ահա այս երկուսն էլ թողնում եմ ձեզ, թող ձեր սիրտն ու հոգին չը վրդովուի»։ Այս խօսքերն որ լսեցին Արուսեակի ծնողքը՝ շատ մխիթարուեցան և սիրա առնելով վերջին անգամ համբուրեցին իրանց զաւակին և բարի ճանապարհ ասացին նրան։ Դորանից յետոյ յաջորդեցին հանդիսականների անվերջ ուրախ և սիրով լի բարեմաղթութիւնները թէ բարեբաղդ կեանքի և թէ բարի ճանապարհի համար, և այսպէս ցնծութեան ու բերկրութեան անվերջ աղաղակներով ու կեցցէներով հարսնեւորները հարսնացուին առնելով ճանապարհ ընկան։ Երեք օր ուրախ ճանապարհորդութիւնից յետոյ նրանք հասան իրանց տունը և սկսուեց հարսանիքը, որը տևեց եօթն օր և եօթը գիշեր։ Հարսանեաց պատրաստութիւնը շատ զարմանալի էր, հարսնեւորները այնքան շատ էին, որ այդպիսի բազմութեամբ հարսանիք դեռ ևս տեսնուած չէր այդ կողմերում։

Եօթներորդ օրը վերջին անգամ հարսնեւորները ցանկալի բարեմաղթութիւնները անելով՝ յայտնեցին իրանց շնորհակալութիւնը Եղիշէին և հեռացան անպատմելի բաւականութեամբ, միշտ անջինջ պահելով իրանց սրտերում այդ փառաւոր հարսանեաց հանդէսի յիշողութիւնները։

Գեղեցիկ Սուրէնը ունեցաւ երկու զաւակ, մինը տղայ և միւսը աղջիկ. տղայի անունը դրին Ապրես, իսկ աղջկանը Արփենիկ։

Ապրեսը երբ ութ տարեկան եղաւ՝ նորան տուին ուսման, որը շատ յաջող սովորում էր, նա իր ուսումը շարունակեց կանոնաւոր կերպով, բայց ափսոս, մի անակնունելի դէպք տակն ու վերայ արեց ամեն բան և բաղդի անիւը շուռ եկաւ։ Զատկի տօնին էր, գիւղացոց սովորութեան համեմատ եկեղեցու դռանը ձու էին խաղում. Ապրեսի հայր գեղեցիկ Սուրէնն էլ առաւ մի քանի ձու և գնաց իր նմանների հետ խաղ անելու և մի փոքր զուարճանալու. նա մի երիտասարդի հետ վէճի բռնուեցաւ, որը շատ սուր կերպարանք ստացաւ, մինչև այն աստիճան, որ սկսեցին միմիանց խփել և ահա գեղեցիկ Սուրէնը այլևս չկարողանալով համբերել՝ հանեց գրպանից իւր գրչահատը և խփեց իր հակառակորդին գետին տապալեց, որը տեղն ու տեղը հոգին աւանդեց։ Այս սարսափելի անցքի լուրը

կայծակի արագութեամբ տարածուեց ամբողջ գիւղը, և ահա գիւղի օգնականը իսկոյն շտապեց դէպի Եղիշէի տունը և բռնելով Սուրէնին յանձնեց բարձր իշխանութեան և վերջինը բանտարկեց նրբան։ Դատաստանական բոլոր գործողութիւնները վերջանալով՝ Սուրէնը դատապարտուեց ութ տարի տաժանակիր աշխատանքի և աքսորի Սախալին կղզին։ Թէպէտ Սուրէնի ազգականները և նոյն իսկ իր անձը Ղևոնդը ահագին գումարներ ծախսեցին, մեծամեծ փաստաբաններ բռնեցին ազատելու, բայց ոչ մի հնար չեղաւ։

Ապրեսը իւր հօր հետ պատահած անցքի մասին ոչ մի տեղեկութիւն չունէր. նա աւարտեց իր ուսումը և վերադառնալով հայրենիք ուրախ ուրախ պատահեց տանեցոց և վերջինները նոյնպէս իրանց հերթում ուրախ դէմք ցոյց տուին նորան, բայց երբ բոլորի հետ ողջունեց և նստեց, տեսաւ որ հայրը չի երևում, հարցրեց իւր պապին թէ՝ ո՞ւր է հայրս, պապը լռեց. նա կրկին հարցրեց, և երբ կրկին պատասխան չստացաւ, Ապրեսը հասկացաւ որ մի դժբաղդութիւն է պատահել, սկսեց լաց լինել և ասել—«թէթէ իմ հայրս մահացել է. պապը ասաց—„ոչ, Ապրես ջան, չէ մահացել“. այս ասելով հանեց իր ծոցից Սուրէնի նկարը և տուեց թոռին, Ապրեսը երբ տեսաւ որ նկարի մէջ հայրը կանգ-

նած է շղթայակապ, աւելի ևս բորբոքուեց ու սկսեց մորմոքալ. և ահա նորան ձայնակցեցին տանեցիքն ևս և տունը ներկայացնում էր կատարեալ մի սուգ։ Ապրեսի ձայնը սչնչով չէր կարելի կտրել, տանեցիք նորա ողբալը տեսնելով՝ իրանք լռեցին և սկսեցին հոգալ՝ որ նորան հանգարտեցնեն. և ահա նորա քոյր Արփենիկը մօտեցաւ նորան և խնդրեց, որ գնան պարտէզ մի քիչ զբօսնեն, Ապրեսը ասաց նորան և գնացին պարտէզ, քիչ զբօսնելուց յետոյ Ապրեսը նստեց խնձորենու տակ հանգստանալու, և ահա սաստիկ մտածութեան մէջ ընկնելով քնեց. երազում ականջին մի ձայն դիպաւ—«Ապրես, Ապրես». Ապրեսը աչքերը բաց արեց և տեսաւ մի ալեզարդ ծերունի, մի ձեռքումն ունէր նիզակ, իսկ միւս ձեռքում գինով լի բաժակ, Ապրեսը սարսափեց այդ զարմանալի տեսիլքից։ Ծերունին ասաց. «մի վախենար, ես սուրբ Մինասն եմ». բաժակը երկարացրեց և ասաց.—«խմիր այս գինին». Ապրեսը ասաց.—«ես ինչպէս խմեմ, տէր իմ, չէ՞ որ իմ ծերունի պապս և տատս ինձանով պիտի մխիթարուին. ես եթէ խմեմ, գինետուն երթալ կսովորեմ և այն ժամանակ իմ գերդաստանի դրութիւնը վատ կըլինի»։—Ծերունին ասաց.—«ում կենացը խմեմ. «խմիր առաջին քո Սուրէն հայրիկիդ կենացը, որ պապիդ տրտմութիւնը ուրախութեան պիտի փոխեմ,

երկրորդ՝ Սասուն գաւառի Շէնիկ գիւղացի Գրիգորի Սիրանոյշ աղջկայ կենացը, որին դու պէտք է լինիս սիրելի և նա քեզ լինի սիրուհի, և այդ սիրահարութեան պատճառաւն էլ պիտի ազատես քո հօրդ գերութիւնից իմ միջնորդութեամբ և Աստուծոյ ամենակարող զօրութեամբ։ Ապրեսը երբ սկսեց խմել բաժակը, ծերունին անյայտացաւ և նոյն րոպէին երազում երևեց Սիրանոյշին և նոյն պատուէրը տուեց, ինչպէս Ապրեսին էր տուել Սիրանոյշը, քնից զարթնեց և սկսեց սիրոյ կրակով այրուել և անհամբեր սպասել Ապրեսի գալստեանը։

Ընթերցողին տանենք Ապրեսի մօտ։

Ապրեսը սկսեց այդ հրաշքի վերայ ընկնել սաստիկ մտածութեան մէջ. այդ րոպէին վերայ հասաւ պապը և ասաց,—Ապրես ջան, ինչու ես այդքան երկար մտածում, գուր մի մտածիլ, որդիս, կեանքիդ վնաս կը պատճառես, Աստուած ողորմած է։ Ապրեսը էլ չկարողացաւ բերնով պատասխանել, այլ միայն մի սաղ ուզեց պապից իրեն ցաւերը պատմելու համար։ Պապը այգեպանին ուղարկեց տանից սաղ բերել տուեց, նա հասկացաւ որ հրաշք է տեսել։ Ապրեսը առաւ սաղը ձեռքը և երգեց այս երգը։

Խնձորենու տակին մի երազ տեսայ,
Սիրահար տուեցին ինձ Սիրանոյշին,
Պարտէզի ծաղկանց մէջ նա գեռահաս է,
Սիրահար տուեցին ինձ Սիրանոյշին։

Երգի ձայնը տուն հասաւ, լսեցին տատը, մայրը և քոյրը և եկան հաւաքուեցան Ապրեսի գլխին, Ապրեսը սկսեց շարունակել միւս տները։

Սասուն ցոյց տուեցին իմ ճանապարս,
Որ այնտեղ նորանէն ազատեմ հայրս,
Պաշտպանիր չթողամեն քոյրս ու մայրս,
Սիրահար տուեցին ինձ Սիրանոյշին։

Օրհնէ, պապս, Ապրես ճանապարհորդին,
Մինչ երբ մնայ հայրս ի մէջ թակարդին,
Ուրախութեամբ տուն կդառնայ ձեր որդին,
Սիրահար տուեցին ինձ Սիրանոյշին։

Ծնողները հասկանալով երգի միտքը, շատ թախանձեցին որ չգնայ, բայց Ապրեսը չհամոզուեց և ասաց.—«անհնարին է, պէտք է գնամ իմ նպատակը կատարելու, որովհետև Տիրոջմէն է ինձ տուած այս պատուէրն. պապը հասկացաւ, որ Աստուածանից է չհակառակեց և ասաց.—«Որդիս, հասկացայ քո երգի միջով ասածդ, որ պէտք է ազատես հօրդ, ահա այդ պատճառով ես քո անունդ այսուհետև

կանուանեմ աշուղական կարգով Ազատ։ Ալրեսը կամեցաւ որ պապի ձեռքը համբուրէ և մնաս բարեաւ ասէ, բայց պապը նրան արգելեց և ասաց.—«սպասիր մի քանի խօսք ունիմ ասելու, ասեմ և յետոյ Աստուած հետդ լինի։ «Ձեռնափայտը սազ արեց և սկսեց երգել այս ողբալի երգը։

Աքաղաղը կանչում է վաղ, արեգակս շուտ արի
Ճանապարհդ կ'սպասենք, արուսեակս շուտ արի
Ո՜հ մնացինք մութ խաւարում, թառամեց վարդենիկդ,
Արա՛ մեզի այցելութիւն, քաջ սոխակս, շուտ արի։
Քանդուեց կեանքիս արձանը, եղաւ ամեն ցիր ու ցան,
Խելագարուած մա՛ն եմ գալիս, չունիմ ինձ մի օթեւան,
Լաց ու կոծով օրերս անցաւ, շուտ կ'մտնիմ դերեզման։
Աւետաբեր աղաւնեակս, լուսնթագս, շուտ արի։
Ո՜հ, Եղիշէն աղաչում է ԵՀովա-Տէր-Իշխանին,
Հայրդ աղաւէ շղթայից, ինչպէս արաւ Շիղային,
Ուրախութեան ձայն մի տայիր մեզ, երգերով պար խաղային,
Զեմ օռանալ մինչի մահս, իմ թռռնակս, շուտ արի։

Երգը վերջացնելուց յետոյ Ալրեսը կամեցաւ գընալ, քոյրը տեսաւ որ եղբայրը հաստատ գնալու է՝ խելքը թռաւ պէս եղաւ, ձեռքը երկարացրեց մազերի հիւսերից մէկը դրեց կուրծքին և սկսեց երգել հետևեալ երգը.—

Իմ թանկագին եղբայրս, ուր ես գնում,
Թշնամին մեզ վերայ ծաղրել պիտի տաս,
Ինձի և խղճալի մայրիկիս թողնում.
Թշնամին մեզ վերայ ծաղրել պիտի տաս։

Եղբայրը

Մի լար, իմ նազելի քոյրս։ մի լար դու,
Թող ծաղրեն թշնամիք, հէչ չկայ վնաս,
Լեր խղճալի մայրիկիս մխիթար դու,
Թող ծաղրեն թշնամիք, հէչ չկայ վնաս։

Քոյրը

Թանկագին օրերը թռաւ ձեռքներէս,
Ինչ որ բարեկամ կար՝ դարձրեց երես,
Առանց պաշտպան, լալով մեզի թողնում ես,
Թշնամին մեզ վերայ ծաղրել պիտի տաս։

Եղբայրը

Ձենք մնալ խաւարի մէջը մշտական,
Աստուած ողորմած է, մի լար, քոյրիկ ջան,

ТИФЛИСКАГО СЕМИНАРІИ БИБЛІОТЕКА

Ինձի երկու կողմից սպասողներ կան,
Թող ծաղրեն թշնամիք մեզ, չկայ վնաս։

Քոյրը

Արփենիկն եմ, օրըս լալով անցկացաւ,
Հնացած վերքերս այսօր նորացաւ,
Արտասուքն երեսին, ոհ, հեղեղ դարձաւ,
Թշնամին մեզ վերայ ծաղրե՛լ պիտի տաս։

Եղբայրը

Ազատին եմ, պիտի ազատեմ հայրս,
Մի լար, կուրախանաս վերջին, իմ քոյրս,
Սիրանոյշի սէրը ծակեց իմ լեարդս,
Թող ծաղրեն թշնամիքը, չկայ վնաս։

Այս երգը վերջացնելուց յետոյ—«մնաք բարեաւ» ասելով ընկաւ ճանապարհ։ Ազատու պապը, տատը, մայրը և քոյրը նորան ճանապարհ քցեցին գիւղից դուրս մինչև աւերակ վանքի մօտը անասելի լացով ու կոծով։

Ազատին շատ աղաչեց և համոզեց նրանց յետ դառնալ, բայց նրանք չէին համոզվում, այդ տեղ վեր առաւ սազը և երգեց այս երգը։—

Վերջին բարևս ձեզի տամ,
Մնաք բարեաւ, պապս, տատս,

Մի՛ք վրդովուի, ես շուտ կուգամ,
Մնաք բարեաւ, մայրս ու քոյրս։

Օրհնութիւն տո՛ւր, մայր հարազատ,
Որդուդ ցաւն է հազարից շատ,
Բարեխօսէ թող՝ ինձ քո կաթ,
Մնաք բարեաւ, պապս ու տատս։

Պէտք է գնամ գտնեմ հայրս,
Բա՜ւ է դու ողբաս, իմ մայրս,
Թող քեզ մխիթարէ քոյրս,
Մնաք բարեաւ, մայրս ու քոյրս։

Ազատուս օրհնէ՛ք, ծերունիք,
Գերութեան մէջ որդի ունիք,
Լինիմ աւետող աղաւնիկ,
Մնաք բարեաւ, պապս ու տատս։

Երգը վերջացնելուց յետոյ ձեռքերը համբուրեց, վերջին հրաժարական ողջոյնը տուեց, և ճանապարհ ընկաւ դէպի Կարս քաղաքը. ճանապարհին մտածման մէջ ընկնելով՝ ճանապարհը կորցրեց և սկսեց ամայի տեղերով գնալ. բայց յանկարծ ուշքի գալով տեսաւ որ մոլորուած է, կանգ առաւ և սկսեց չորս կողմը նայել որպէս զի ճանապարհը գտնէ, բայց տեսաւ որ ոչ մի կողմ որևէ հետք, չի նկատվում՝ սաստիկ յուսահատուեց իւր անբաղ-

դութեան վերայ, սազը ձեռքն առաւ և սկսեց երգել այս երգը։

Ո՞վ եղաւ, արդեօք, ինձ պէս խեղճ մոլոր,
Աչքս բացուեց տեսաւ խոցերս ինձի,
Պէտք է այստեղ արտասուեմ ցաւս բոլոր,
Անմարելի այրում են բոցերս ինձի։

Ստեղծող, փարատէ, հոգիս է տկար,
Նպատակներ ունիմ, անց չի կենան զուր,
Պէտք է Սիրանոյշին գնամ լինիմ հիւր,
Ձամբէս են կորուցել հոգսերս ինձի։

Ազատին ասաց.—«ախ, երանի՜ ես այս սիրահարութեանը չ'պատահէի և այս ամայի տեղում չը մեռնէի և իմ ձեռքով իմ թշնամու վրէժը առնէի։ Նոյն րոպէին սուրը աւետարանի խօսքը յիշեց—«և որ համբերեսցէ իսպառ նա կեցցէ» և շարունակեց միւս տունը։

Վրէժ լուծել կուզես՝ զուր է, Ազատ,
Այդ քոյ մտածմունքդ մրուր է, Ազատ,
Այսօր հոգիդ քեզի հիւր է Ազատ,
Խաւար են ցոյց տալիս լուսերս ինձի։

Երգը վերջացնելուց յետոյ քիչ առաջ գնաց ու մէկ բարակ ճանապարհի պատահեց, այդ շաւղով

կէս ժամաչափ առաջ գնալով պատահեց մի աւերակ վանքի, որի վերայ բազէն սաւառնում էր անընդհատ. Ազատը կամեցաւ նորան հեռացնել, գոռաց, նշանացի ցոյցեր արեց, բայց բազէն մնաց անտարբեր, և շարունակում էր ճախրել վանքի փլած կաթուղիկէի վերայ։ Ազատու համբերութիւնը հատնելով՝ ներս մտաւ վանքի մէջ և տեսաւ, որ մի աղաւնի կուչ է եկել մի անկիւնում և իւր ձագերը թողել է անպաշտպան, բազէի անգթութեան որս լինելու։ Ազատու սիրտը կտրատուեց և կարեկցութիւնը շարժուելով՝ փորձեց բազէին վախեցնել սազի ձայնով, բայց դարձեալ նա մնաց անտարբեր։ Ազատը նորա յամառութիւնը տեսնելով սկսեց նորան անիծել հետևեալ երգով։

Մի թռչիր, աղաւնի, մի թռչիր, թաղ կաց,
Դեռ ևս բազէի ճանկերը սուր են,
Թակարթներ է լարել նա միշտ քո դիմաց,
Նորա փետուրները պողպատէ թուր են։

Անգութ բազէ, չարութեան կ'հետևես,
Աշխարհի երեսին մինչև երբ տևես,
Բոլոր թռչունների մէջ անպիտան ես,
Քեզի նետահարող որսորդներն ուր են։

Տարածել է ընդդ վերայ թևերը,
Անխղճիցը ազատէ Տէրը,

Ազատուելու կոպասեն քո ձագերը,
Լալագին աչքերով տրտում տխուր են։

Իսպառ Ազատը տեսած չէր այդպէս բան,
Խեղճ աղաւնին չունի իրան պահապան,
Բազէ, միտ բեր, քեզ էլ ուտողներ շատ կան,
Սորանց պէս քո ձագերդ էլ կը մոլորեն։

Այս երգը աւարտելուն պէս տեսաւ, որ մի որսորդ իր բարակներով գալիս է դէպի իր մօտը, եկաւ նա և հարցրեց.—«ա՛յ մարդ, այս ինչ երգի ձայն էր».—Ազատին ասաց. տեսնում ես, այս անգութ բազէն կամենում է փախցնել այս խեղճ աղաւնուն և իւր ձագերին. որսորդը նայեց դէպի բազէն և հրացանը ուղղեց ու նորան իսկոյն գետին վայր ձգեց, վազեց բռնեց, փետուրները այրելով մարմինը լոշոտեց և տուեց իւր բարակներին. որոնք իսկոյն ագահաբար լափեցին։

Ազատը մօտեցաւ նրան և շնորհակալութիւն յայտնեց, որ նա ազատեց իրեն խղճահարութիւնից, իսկ աղաւնին ուրախութիւնից սկսեց վեր բարձրանալ օդի մէջ և ճախրել ազատ կերպով։

Ազատին այդտեղից շարունակեց իւր ճանապարհը և հասաւ Գարեգետին, շատ վայր ու վեր անելով չկարողացաւ մի յարմար և անվտանգ անցք գտնել, օրն էլ տարաժամ լինելով՝ վճռեց մի ապաստան գտնել, այդ նպատակով նա նստեց մի մեծ քարի տակ և ինքն իրեն մտածեց.—„եթէ աւազակներ էլ պատահեն այստեղով անցկենալու, կգան ինձ կ՚նկատեն„— բայց այնուամենայնիւ վախից դողում էր և ասում էր.—„թէ ինձ աւազակներ պատահեցին՝ անպատճառ պէտք է սպաննեն և ձգեն գետը, և ով արդեօք կարող է իմանալ թէ՝ Ազատը ինչ եղաւ...։—

Մինչդեռ այսպէս մտածում էր, աչքերը վեր դարձրացրեց և տեսաւ, որ երեք ձիաւոր գալիս են դէպի իրեն՝ սկսեց պահ մտնել քարի տակը, բայց իզուր, ձիաւորները նորան հեռուից տեսած լինելով՝ ուղիղ վերան կանգնեցին. Ազատը իրան քնած ձևացրեց. նրանցից մէկը նիզակի ծայրով բրթեց, բայց նա շուռ գալով միւս կողմի վերայ՝ շարունակեց քնել. նրանք բարձրաձայն ասացին.„ա՛յ մարդ վեր կաց, տեսնենք դու ով ես, ո՞րտեղացի ես, ո՞ւր ես գնում„.— Ազատը աչքերը բաց արեց և թռաւ կանգնեց ու ասաց,— ես Շիրակայ գաւառիցն եմ, գնում եմ Կարս քաղաքը. բայց այս դետից չ՚կարողանալով անց կենալ՝ մնացի այստեղ մոլորուած և վճռեցի գիշերը այստեղ անցկացնել, մինչև ի լոյս մի մարդ հասնէ ինձ անցկացնէ իւր ձիովը„։ Ձիաւորները ասացին.— „աշուղ քեզ այստեղ մնալը վնասակար կ՚լինի, գուցէ աւազակներին զոհ լինիս,

արի մի երգ երգէ, մենք քեզ կանցկացնենք։ Ագատին համոզուեց, որ ձիաւորները արդարև աւազակներ չեն՝ սիրտ առաւ և սազը ձեռքը առնելով սկրսեց գովել նրանց հետևեալ երգով։

Եղբարք, մատաղ լինիմ ձեզի,
Անցկացրէք ինձ գետից,
Գովեմ գովաբանեմ ձեզի,
Անցկացրէք ինձի գետիցը։

Սպիտակ նժոյգ ձիերդ . . .
Շողշողում են նիզակներդ,
Անյաղթ լինին սուսերներդ,
Անցկացրէք ինձ գետիցը։

Շուտով հասաք օգնութիւնիս,
Խաւարիցը հանեցիք լիս,
Կօրհնէ ձեզ միշտ Ագատիս,
Անցկացրէք ինձ գետիցը։

Այս երգը աւարտելուց յետոյ ձիաւորներից մէկը նրան անցկացրեց գետի միւս կողմը։ Ագատը նրան հարցրեց գիւղի հեռաւորութիւնը, նա ցոյց տուեց մօտակայ բլրի տակին. Ագատը շնորհակալութիւն յայտնելով՝ շարունակեց ճանապարհը և հասաւ մինչև բլուրը, գիշերը վերայ հասնելով այլևս չկարողացաւ մի կերպ բլուրը անցկենալ և հանե

մինչև գիւղը, ուստի նստեց մի ապառաժ քարի տակ և սկսեց տրտմել իր գրութեան վերայ, և որտի խորքից մէկ «ախ» քաշելով սազն առաւ և սկսեց երգել այսպէս.—

Լուսացո՛ւ Տէր Աստուած, ցաւերս շատ է,
Ինձի ճանապարհիս խրատիչ կուզեմ,
Այս խաւարի միջէն ինձի ազատէ՝
Կորուցած հայրիկիս որոնիչ կուզեմ։

Անհովիւ ոչխար եմ, մնացի սարին,
Անիւս դադարեց, դեմ առաւ քարին,
Դու ես ինձի տուել, կընդունեմ բարին,
Թշուառիս խրատող ուսուցիչ կուզեմ։

Բազմացան վերքերս մէկը մէկէն խառ,
Դարձել եմ մէկ թիթեռ, կրակն ընկայ վառ,
Ասող չկայ, Ագատ, ճանապարհդ ա՛ռ,
Սուրբ Մինասի նման մէկ փրկիչ կուզեմ։

Այս երգը աւարտելուց յետոյ լաց եղաւ. ու անտանելի վշտացած հոգով ընկաւ քնի մէջ. շատ քնեց թէ քիչ՝ Աստուած գիտէ, մէկ էլ աչքերը բաց արեց և տեսաւ իրան գիւղի մօտ մի սպասի տակ նստած՝ զարմացաւ և ինքնիրան ասաց.—անշուշտ, այս հրաշք է. և Աստուածանից է—.

փառք տուեց Տիրոջը և գլուխը վեր բարձրացնելով իր հանդէպ տեսաւ մի բարձր դուռ, ասաց.—այս տան տէրը անպատճառ հարուստ կ'լինի կգնամ նրան կասեմ՝ որ ինձ ընդունէ հիւր, և այդտեղ գիշերելով միւս օրը կգնամ Կարս». այդպէս էլ արեց, գնաց խնդրեց, բայց ափսոս որ ներս չընդունեցին, անցաւ մի ուրիշի դուռ խփեց, բայց դարձեալ ի-զուր, այդպէս քառասունի չափ դռներ խփեց, բայց դարձեալ ոչինչ չեղաւ։ Այդպէս դռնեդուռ այնքան թափառեց՝ որ լուսացաւ. առաւօտեան քաղցած ճանապարհ ընկաւ, տասը ժամի չափ գնալով հասաւ մի գիւղ և դարձեալ դիմեց մի մեծ դռան, որտեղ բաւական մարդիկ էին հաւաքուած, խնդրեց տան տիրոջից աղերսագին որպէսզի մի գիշեր հիւր լինի նորա տանը. տան տէրը ամաչելով մարդկանց բազմութիւնից ներս ընդունեց և մի տեղ ցոյց տուեց նրան նստելու։ Տան տիրոջ անունը Առաքել էր, նա շատ դանդաղ մարդ էր և գրեթէ խօսելու ընդունակութիւնը կորցրել էր, որովհետև նա մարդկանց մէջ մտնելու սովորութիւն չունէր, նա անհոգ կերպով Ազատու Յօտ նստեց և ծխում էր, առանց մտածելու թէ Ազատը որքան քաղցած է. վերջապէս տան հարսներից մէկը առանց ասելու հաց բերեց. թէև բերած հացը մի հարուստ ճաշ չէր, չոր հաց և մի աման թան, բայց Ազատու

համար շատ թանկագին էր, որը շատ ախորժակով կերաւ և հանգիստ քնեց։ Առաւօտեան գարթնեց շուտով սկսեց պատրաստուել որ ճանապարհ ընկնի. Առաքելը եկաւ և զայրացած ասաց.—« այ աշըղ, ինչ անսիտան մարդ ես, որ առանց մի երգ ասելու պէտք է գնաս, դէհ, մի երգ ասա յետոյ գնա, Աստուած հետդ լինի.— Ազատը սազը առաւ նրստեց ու սկսեց երգել այսպէս.—

Ցնծում ես փարթամութեանդ, հո՛ւր է ուրախութիւնդ,
Ծողովել ես գանձ թանկագին, զո՛ւր է ուրախութիւնդ,
Մէկ թօփ կտաւ բաժին ունիս, թէ որ այն էլ չըճարուի՝
Կիջեցնեն մերկ տապանը, ո՛ւր է ուրախութիւնդ։

Ոչնչից ես դու զոյացած, բոյս չունիս, հողէ աման,
Զոր ճանապարհ կ'շրջես, յոյս չունիս, հողէ աման,
Թէ վայր ընկար՝ կ'կոտրուիս, յոյս չունիս, հողէ աման,
Ինչ պէտք է տիրոջդ ասես, սուր է ուրախութիւնդ։

Հոգանիւթից ստեղծուած ենք, ցաւալից է մեր օրը,
Սուրբ գրքերը լաւ կ՝պատմեն, անցքերը նախահօրը,
Քրիստոսով պէտք է գտնենք մեր բաղձանք բոլոր,
Ազատ, պահօք և աղօթիւք բիւր է ուրախութիւնդ։

Առաքելը բան չհասկանալով երգից՝ շատ շնորհակալ եղաւ Ազատուց. վերջինը նոյնպէս շնորհակալ եղաւ և մնաս բարով ասելով ճանապարհ ընկաւ դէպի Կարս։ Ճանապարհին երեք աշուղ պատահեցին նորան, նրանցից միայն մէկը ճանաչեց Ազատուն և կեղծաւորաբար հարցրեց նրանից—« աշուղ աղբէր, որտեղացի ես. Ազատը պատասխանեց—Մուղերիսցի եմ. մի քիչ որ գնացին՝ աշուղը ընկերներին աչքով արեց, յետ ընկան և նրանց ասաց—» տղէք, գիտէ՞ք այս ով է.—նրանք պատասխանեցին—« ոչ»—նա ասաց.—«սա Մուղերիսցի Եղիշէի թոռն է, գնում է Հայաստան սիրահարութեան պատճառաւ, բայց Կարսում մնալու է, որպէզի ճանապարհածախս աշխատի և յետոյ շարունակէ իւր ճանապարհը, բայց մեր բանը վատ եղաւ, նա որ գնաց Կարս, մեր նշանակութիւնը կկորչի, որովհետև նորա համբաւը մի ամիս է որ տարածուել է իբրև շատ լաւ երգող աշուղ։» Ընկերները համա-

ձայնուեցին և մտածեցին հետևեալ խորամանկութիւնը.—« գնանք այս մօտակայ գիւղը և մի նամակ գրենք իրան ազգականների կողմից թէ՝—» Ազատի, այս նամակը ստանալուդ պէս, շուտով գաս հասնիս տուն, որ մեծ վնաս է պատահել, պապդ, տատդ և մայրդ մահացել են.» այսպիսով նա իսկոյն կհեռանայ Կարսից։ Այդպէս էլ արին. գնացին մօտակայ գիւղը, նամակը պատրաստեցին և շտապեցին Կարս, մի գիշեր մնացին, հետևեալ օրը բաւական ման գալուց յետոյ հազիւ պատահեցին Ազատուն, որը մի պարոնի հետ գնում էր Գարեգինի սրճարանը, (բոլոր երգողները այնտեղ էին հաւաքւում), նրանք հետի մարդուն յետ կանչեցին և նամակը յանձնեցին նրան՝ որ նա էլ Ազատուն տայ և նրան յայտնեցին հանգամանքը և ցաւակցութիւն ցոյց տուին, որ Ազատուն այդպիսի դժբախտութիւն է պատահել, որ յանկարծ զրկվում է իր ընտանեաց երեք անդամներից։ Մարդը նամակը հասցրեց Ազատուն. նա կարդաց և հարցրեց թէ—« այս նամակը ով տուեց քեզ.» նա ասաց.—» աշուղներ էին»—Ազատը իսկոյն հասկացաւ գործի եղելութիւնը, որ թշնամութիւն է այդ. բայց որովհետև այդ գիշեր վատ երազներ էր տեսել, այդ պատճառաւ շփոթուեց ու թերահաւատեց, հետևապէս վճռեց վերադառնալ տուն և ստուգել հանգամանքը, Սար ու

քար ոտքի տակ առնելով եկաւ մինչև իրենց գիւղի սահմանը. բայց չկամենալով ցերեկով մտնել գիւղ, որպէս զի չ'ծաղրուի, մնաց մինչև մութը ընկնելը, սկսեց տխրել ու լաց լինել իր բաղդի վերայ։ Սազն առաւ ու երգեց այսպէս։

Այս անիրաւ բաղդը ինձի ինչ արաւ,
Մանուկ հասակիս մէջ զրկեց լաւ օրից,
Ուրախ զուարճութիւնք չտեսայ ընաւ,
Իսպառ կարօտ թողեց իմ գերդաստանից։

Հաղներգութիւնով իմ ցաւերս եմ խօսում,
Ամեն օր, ամեն ժամ, վատ լուրեր լսում,
Արտասունքն աչքերիս, արիւն է հոսում,
Զորացաւ ծաղիկս, թափուեց արմատից։

Ողբա՛, Ազատ, ընկար, էլ կանգնել չունիս,
Թառամեցաւ բողբոջ սիրտդ վարդի պէս,
Այս ինչ գառը վիճակի մէջ ծնուայ ես,
Մէկ օր աչք չեմ բանում, կսկծագին լացից։

Այս երգը վերջացրեց թէ չէ՝ արևը մայր մտաւ. նա եկաւ իրանց տան լուսամուտի տակը նստեց, ականջ արեց, տեսաւ որ բոլորն էլ առողջ են և նստած հաց են ուտում, շատ ուրախացաւ ու ասաց.—" վեց օր է որ տանից դուրս եմ եկել, հիմայ որ յայանուիմ՝ գուց էինձ չթողնեն հեռանալու,

ուստի լաւ է որ շարունակեմ ճանապարհս»—, նա վերադարձաւ դէպի Կարս։ Նորա համար անտանելի էր աշուղների խաբեբայութիւնը, այդ պատճառաւ սազը առաւ և սկսեց նրանց անիծել այսպէս.—»

Դատիր տէր իմ. խաբեբային,
Արմատախիլ արա՛ բոյսը,
Ներքնագործին ու կախարդին
Մարէ վառ արեգի լոյսը։

Աղի արտասունք թափեցին,
Քաղցրախօս լեզուով խաբեցին,
Վրեժս լուծէ Միածին,
Ամեն տեղից կտրէ՛ յոյսը։

Ազատ, արի և համբերէ,
Քո սարդ սիրտդ մի վրդովէ,
Քեզի տատղներին սիրէ,
Կանչէ՝ փարատիչ Յիսուսին։

Այս երգից յետոյ շարունակեց ճանապարհը, օրը մէկ իջևան գնալով հասաւ Կարս. գնաց իր բարեկամի տունը, և նրան հետը առնելով գնացին սրճարան։ Աշուղները իմանալով Ազատաւ գալը, չնայելով որ բաւական աշխատել էին, թողին ու հեռացան Կարսից։ Ազատը ներս մտաւ սրճարան, տեսաւ

որ մի կողմը լուսաւորչականներեն նստած իսկ միւս կողմը բողոքականներ և վիճում են միմիանց հետ, լուռ նստեց. սրճարանի մարդիկը առաջարկեցին նրան որ մի երգ երգէ որպէսզի այս վէճերին վերջ տրուի, նա համաձայնուեց և սազը առնելով երգեց այսպէս.—

Ազնիւ արիւնով ենք գնուած, մէկ բարի բոյս ունենանք.
Չմոռանանք Փրկչի մահը, հաստատուն յոյս ունենանք,
Սպառազէն առաջ գնանք, կռուենք չարին դէմ—առ—դէմ
Սիրով Տ. Յիսուսին կանչենք և խրախոյս ունենանք։

Փրկիչ որդուն պատրուսեալ ենք, դատարկաբեր չլինինք,
Մոլորցնող և խաբեբայ չարերին մեր չլինինք
Նման և այն մաքսաւորին խնդրենք, անսէր չլինինք,
Տիրոջ անունովը ցնծանք, և պայծառ լոյս ունենանք։

Ով ստեղծող, Ազատ ծառադ հառաչում է, լուր մեզի,

Տիւ և գիշեր աղաչում է, չ'պատահի զուր մեզի,
Սամարացուն տուած ջրիդ ծարաւեալ ենք, տուր մեզի,
Քանզի գին ենք քո սուրբ արեան, քեզ բարեխօս ունենանք։

Այս երգից յետոյ սրճարանի մարդիկը մի-մի ոսկի տուին Ազատուն ընծայ։ Ազատին պատրաստուում էր գնալու, այդ բանը նկատելով սրճարանի մարդիկը նորից խնդրեցին, որ մի երգ էլ երգէ յետոյ գնայ։ Ազատը սազը առաւ ձեռքն ու սկսեց երգել այսպէս.—

Մոլորեցնող չարերու մէջ չմնանք,
Հաղորդենք մէկզմէկու սէ, է, ըէ.
Թէ որ կուզէք արքայութիւնը գնաք,
Նուիրէք աղքատին խէ, է, ըէ։

Արթուն կացէք Փրկչի գալստեան համար,
Զէ որ իսկ նա է մեզ ճիշտ ազատարար,
Պատի կերթանք թէ մեծ թէ պստիկ գումար,
Բարեխօս է մեզի մէ, է ըէ։

Ազատ, դարձել ես դուն այլոց խրատ,
Զէ որ անձիդ ունիս անմարել հրատ,

Ծանր մեղքեր էլ կան դրած քո վրադ,
Քո սուրբ Փրկչին միտքդ բեն, է, ըէ։

Երգը վերջացնելուց յետոյ շատ շնորհակալ եղան և Ազատուն մի մի բերան բարեմաղթութիւն անելով ցրուեցան։ Ազատն էլ սրճարանապետին վճարելով իր հաշիւը, շնորհակալութիւն յայտնելով, կարաւանի հետ ընկաւ ճանապարհ և մի օր և գիշեր գնալով հասաւ Կաղզուան։ Այնտեղ գնաց եկեղեցի, աղօթեց և եկեղեցին արձակուելու ժամանակ դուրս եկաւ եկեղեցու դուռը կանգնեց որպէսզի մինը հրաւիրէ գիշերելու կամ իւր տունը հիւր մնալու։ Եւ յիրաւի Զաքար ապան դուրս գալով՝ նորան առաջարկեց գնալ իւր եաւից. երբ որ տուն հասան՝ նորան հարց ու փորձ արեց թէ ով է, ո՞րտեղացի է, ո՞ւր է գնալու. Ազատը հանգամանօրէն պատմեց և յետոյ քնեցին։ Առաւօտեան Ազատը վեր կենալով կամենում էր ճանապարհ ընկնել, բայց Զաքար աղէն նորան արգելեց և հաց բերել տուեց, հացը որ կերան՝ Ազատուն ասաց.—« ա՛յ աշուղ, տեսնում ես ի՞նչ դրութեան մէջ եմ, թշնամիքս ինձ հանգիստ չեն թողնում, անտանելի ցաւերի մէջ եմ գտնվում, գոնէ մի երգ էլ ասա, մի քիչ սիրտս մխիթարիր՝ թէ շնորք ունիս, յետոյ Աստուած հետդ լինի,»— Ազատը սազն առաւ և սկսեց երգել այսպէս.—

Թէ Աստուածդ կսիրես, չարին համբերէ,
Տա՛ր սիրով վշտերդ, մեծ Յոբի նման,
Երջանկութեան մէջ ես, բարին կատարէ,
Ամենքն էլ քեզ օրհնեն Յակոբի նման։

Հայ ծնար, հայ մեռիր, Հայկայ բարբառով,
Շուրջ սեղանդ պատեն որդւով և թոռնով,
Կարդան պատմութիւնդ թանկագին ճառով,
Գեղեցիկ Արայի, Յովսէփի նման։

Ազատը կասէ.—» տա՛ր թշնամուդ բեռը,
Թող աստուածը անէ արդար վճիռը.
Քանդէ սրտիդ միջի վատթար կնճիռը,
Մեքենայով շինուած սուր խոփի նման։

Երգը վերջացնելուց յետոյ Զաքար աղէն շատ շնորհակալ եղաւ և մի նժոյգ ձի ընծայեց նրան։ Ազատն էլ իւր կողմից խորին շնորհակալութիւն յայտնելով՝ ճանապարհ ընկաւ, օրը մի իշևան գնալով հասաւ Խնուսի դաշտը և մօտենալով Մարուֆայ գիւղին, սանձը տուեց ձիուն և ձին գնաց կանգնեց Յովհաննէս անունով մի մարդի դուռը։ Յովհաննէսի ծառաները եկան ձին բռնեցին և Ազատուն իջեցնելով տուն հրաւիրեցին։ Ազատը ներս մտնելով ողջունեց Յովհաննէսին և կանգնեց,— Յովհաննէսը ողջոյնը ընդունելով ասաց—« որդիս,

դու իմ տունս գիտութեամբ եկար թէ պատահմամբ նա պատասխանեց.—«այո, պատահմամբ եկայ, միայն սանձը տալով ձիուս, ուխտել էի— ո՛ր դռան մօտը որ կանգնեց՝ այնտեղ էլ իջնեմ— և այնպէս եկաւ քո դուռը կանգնեց». Յովհաննէսը որ այս լսեց, գլուխը վեր բարձրացրեց և ասաց—«Փառք քեզ Աստուած, փառք, որ դու Եղիշէի հայը չթողիր ինձ վերայ և նորա լաւութիւնը չ՝կորցրիր—„ և յետոյ դառնալով Ազատուն ասաց.— դու դեռ երեք տարեկան էիր, որ ես եկայ ձեր տունը և պապդ ինձ մի ամբողջ ամիս պահեց. երբ վերադարձայ մեր երկիրը միշտ Աստուած էի կանչում, որ պապիդ երախտեաց տակից դուրս գամ. և հիմայ փառք իրան, որ չ՝կորցրեց և իմ բաղձանքս կատարեց, էհ, որդիս, հիմայ ինչ նպատակի համար ես գնալու արդեօք»։ Ազատը բոլոր հանդամանքը պատմեց նրան. Յովհաննէսը երբ որ իմացաւ, շատ և շատ ափսոսաց Եղիշէին։ Ազատը ասաց-—„ ափսոսալու օրը անց է կացել, ես մինչև այստեղ եկել եմ, բայց էլ չեմ վըստահանում գնալ, որովհետև վախենում եմ քիւրդերից, քանի որ նրանք այս միջոցներում շատ սարսափելի բարբարոսութիւններ են կատարում, եթէ ես նրանց պատահեցի, անշուշտ ինձ էլ կ՝վնասեն, ուրեմն՝ խնդրում եմ, որ ինձ մի ընկեր շնորհես, որպէսզի ինձ ուղեցոյց և ընկեր

լինի մինչև Սասուն„։ Յովհաննեսը ասաց.—„ շատ լաւ, առաւօտեան ես քեզ մի ընկեր կ՝տամ հէնց Սասունցի մի մարդու, որ է քաջ—Սրաբօն„։ Գիշերը հանգստացան, առաւօտեան Ազատը վաղ զարթնեց և սպասում էր Յովհաննէսի գալուն. Յովհաննէսը եկաւ և մի մարդ ուղարկելով դրացու տանից բերել տուեց Սրաբօին, և յայտնեց իր կանչելու նպատակը, այն է՝ առաջնորդէ Ազատուն մինչև Սասունի Շէնիկ գիւղը։ Սրաբօն ասաց, թէ դու ինձ կանչած չ՝լինէիր՝ ես հիմայ ճանապարհին կ՝լինէի, դէ, որ այդպէս է գնանք„։ Յովհաննէսը բարի ճանապարհ մաղթեց. Ազատը նրա ձեռքը համբուրելով և շնորհակալութիւն յայտնելով ճանապարհ ընկան։ Ճանապարհին Ազատը իւր բոլոր անցքերը մանրամասնօրէն պատմեց Սրաբօին, որը ասաց—„ եթէ այդպէս է, ես իմ ձեռքով պէտքէ կատարեմ„—. նրանք տաք տաք խօսելով ճանապարհի ուղղութիւնից՝ շեղուեցին և հանդիպեցին մի բլրի և բարձրանալով նրա գլուխը, այս կողմ այն կողմ նայեցին և տեսան որ մի հօտ ոչխարներ ցիր ու ցան եղած՝ դառներն էլ հետները բառաչում են, որովհետև անգութ գայլերը սկսել էին նրանցից պատառոտել, և նրանց անմեղ արիւնով ներկել բլրի շրջապատի գեղեցիկ կանաչերն ու ծաղիկները։ Ազատը ասաց Սրաբօյին,—„ երևի հրվիւը քնած է, որ հօտը այս դրութեանն է մնացել.„ Սրաբօն

ասաց. ես էլ եմ այդպէս կարծում.„ Ազատը ասաց.— ուրեմն որ այդպէս է, ես մի երգ պիտի երգեմ, որպէսզի Հովիւը զարթնի„. այս ասելով սազն առաւ և սկսեց երգել.—

Չգիտեմ, քնած ես, ինչ է պատճառը,
Զարթիր, տես, հօտերդ ցիր ու ցան եղած՝
Շաղաղուած ծաղիկներն արիւնախառն,
Զարթիր, տես հօտերդ ցիր ու ցան եղած...

Գայլերը չորս կողմից փաթաթել են, ոհ,
Գառնուկներդ անմեղ տեղը եղան զոհ,
Զայն կուտամ, չգիտեմ քնած տեղդ քոյ,
Զարթիր, տես, հօտերդ ցիր ու ցան եղած...

Անտէր մոլոր թափառում են սար ու քար,
Անգութների ձեռքից եղան նետահար.
Խեղճ Ազատը ինչպէս անի քեզի ճար,
Զարթիր, տես հօտերդ ցիր ու ցան եղած...:

Այս երգից յետոյ էլ Հովիւը չ՝զարթեց։ Ազատը իւր ձին թողել էր Յովհաննէսի տունը, ուստի ոտով լինելու պատճառաւ հնարաւորութիւն չունէր երկար մնալու ամայի տեղերում, դորա համար այլ ևս չէին կարող Հովուին սպասել՝ շարունակեցին ճանապարհը և օրը մէկ իջևան գնալով հասան տեղ։

Արաբօն ասաց.—„ եղբայր, գնանք մեր տուն, Ազատին համաձայնուեց, երբ ներս մտան տուն, տեսաւ մի ալեզարդ ծերունի նստած՝ հարցրեց Արաբօին„ եղբայր, ա՞յս է քո հայրը»- նա պատասխանեց—« այո՛„. Ազատի հարցի ձևը այդպէս էր, որովհետև ճանապարհին Արաբօն պատմել էր իւր հօր արբեցութեան և վատ բնաւորութեան մասին։

Գարունը նոր էր սկսուած. Ապրիլ ամիսն էր. Սիրանոյշը իւր աղախիններով զբօսնում էր այգու մէջ. Արաբօն շուտով գնաց նորա մօտ աչքալոյս տալու Ազատու գալստեան առթիւ. երբ որ հասաւ այգու դուռը, աղախինները եկան արգելեցին նորան ներս մտնել։ Արաբօն ասաց.—„մի՞թէ չէք ճանաչում, ես Արամն եմ, եկել եմ Սիրանոյշին աչքալոյս տալու. հաւատարիմ աղախին Հրանոյշը գնաց Սիրանոյշին յայտնեց, և նա հրամայեց կանչել։ Արաբօն ներս մտաւ և ասաց հետևեալը.—„ ես անցեալ ամսի մէջ Խնուս էի գնացել, ինձ պատահեց քո սիրելին և ինձ հետ բերի մեր տուն. հիմա եթէ կամենում ես երեկոյեան կ՝բերեմ քեզ մօտ»։ Սիրանոյշը ասաց. «եղբայր, ահա երեք ամիս է որ ես տանջվում եմ նորա սիրահարութեամբ և կեանքս մաշուել է դրեթէ, ուստի խնդրում եմ հայրիկիս մի կերպ խօսք հասկացնես։ Արաբօն ա-

ասց —« շատ լաւ կ'լինի „. և դուրս գալով եկաւ տուն, տեսաւ որ Ազատը շատ տրտում է, ասաց — մի տրտմիլ, եղբայր, ես յոյս ունիմ, որ Սիրանոյշի հայը Գրիգորը իմ խնդիրս անտես չի առնի. „ այս բանը որ Արաբօի հայրը իմացաւ հետաքրքրուեց և Արաբօն էլ նրան պատմեց բոլորը։ Հայրը դառնալով դէպի Ազատին ասաց.— „ ես քեզանից կ'պահանջեմ մի թաչնիս երգ. թէ կարողացար իմ սրտովս երգել՝ նոր կ'հաւատամ որ այդ բանը Աստուծոյ անօրէնութեամբնէ և կ'լինի. որովհետև Սիրանոյշի պատճառաւ շատ աշուղներ իմ ձեռքից թաց աչքով են գնացել։ Ազատը չկարողանալով դիմանալ ծերունու հպարտ խօսքերին՝ առաւ սազը և երգեց այսպէս.—

Մարդոյ Որդին կուգայ, ունի յարութիւն,
Սիրէ քո թշնամին և քեզ ատողին,
Մէկ օր կգայ յատեան, ունիս յարութիւն,
Կարդա սուրբ գիրքը տես գրուած ա տողին։

Երիտասարդութեան ժամանակդ անցաւ,
Ծերոց շարքին ես մտել, ալեզարդ. անցաւ,
Եթէ կուզես մնալ անվիշտ ու անցաւ,
Էլ արժան չէ քեզի լմսել այդ օրին։

Վեր առ խաչդ, գնա Տիրոջդ հոս արագ,
Մէկ ձեռք հանդերձ հագիր. այն էլ հասարակ,

Ազատիս երգում է որպէս հասարակ,
Ձայնս լսին՝ սարսափեցին, ահդողին։

Երգը վերջացնելուց յետոյ ծերունին շատ շնորհակալ եղաւ և ասաց.— «Հաստատ, Սիրանոյշը քեզ արժան է»։ Ընթերցողին տանենք Սիրանոյշի մօտ։ Ազատի ձայնը հասաւ պարտէզ, Սիրանոյշը կանչեց իւր աղախին Հրանոյշին և ասաց— „լսում ես այս ձայնը, ինձ այրում է, ես այնպէս եմ կարծում, որ Արաբօի ասած տղայի ձայնն է“. Հրանոյշը ասաց.— „ես էլ եմ այդպէս կարծում“։ Սիրանոյշի համբերութիւնը հատնելով գնաց իւր հօր մօտ. և ասաց.— „ գորովագութ հայրիկ, այդու մէջ մանգալիս Արաբօենց տանից մի քաղցր ձայն լսեցի, ես կարծում եմ, որ աշուղ կ'լինի, հիմայ խնդրում եմ մի մարդ ուղարկես Արաբօին էլ իրան աշուղին էլ բերել տաս մի քիչ երգէ լսենք։

Հայրը ասաց.— „շատ լաւ կ'լինի, աղջիկս, և իւր ծառաներից մէկին ուղարկելով բերել տրուեց։ Սիրանոյշը լուսամուտի առաջիցը մի վարագոյր քաշեց, ետևում նստեց և սպասում էր Ազատի գալստեանը։ Ազատը երբ մօտեցաւ սենեակին՝ աչքը ընկաւ Սիրանոյշին և մտքումն ասաց.— „ իսկ և իսկ այս պատկերն էր որ ես երազումս տեսայ, և սրտիցը մի մխ քաշելով՝ ներս մտաւ և բարև

տուեց։ Գրիգորը բարեւը սիրով ընդունեց եւ տեղ ցոյց տուեց նստելու. քիչ յետոյ հարցրեց թէ „ո՞ր տեղացի ես.“— Ազատը խոնարհաբար պատասխանեց.— „Շիրակայ գաւառիցն եմ“. Գրիգորն ասաց. „եթէ դու Շիրակիցն ես, այնտեղ երկու աւերակներ կան, եթէ դու կարողացար երգի միջով նրանց անունները տալ՝ նոր ես կ՚հաւատամ, որ Շիրակեցի ես։ Սիրանոյշն էլ յառած նայում էր Ազատուն։ Ազատը Գրիգորի խօսքի համեմատ սազը վեր առնելով երգեց այսպէս.—

Լսէ, պատասխան տամ ես քո հարցերին,
Շիրակումն աւերակ Մրէն ու Անին,
Աքժանի են եղել նոքա բուերին,
Շիրակումն աւերակ Մրէն ու Անին։

Հինգ հարիւր տարի է, որ աւերակ են,
Սև քողով փաթաթուած՝ առանց պաշտպան են,
Ձեռքները ճար չկայ, խեղճերն ինչ անեն,
Շիրակումն աւերակ Մրէն ու Անին։

Գլորուել են, կանգնելու լոյս էլ չունեն,
Իրանց վերայ ծագելու լոյս էլ չունեն,
Զորացած արմատներն՝ մէկ բոյս էլ չունեն,
Շիրակումն աւերակ Մրէն ու Անին։

Ազատուս կեանքը քեզ մատաղ, իշխանս,
Լացով կոծով թողի իմ գերդաստանս,

Ձեն նորոգուի նոքա մինչ յաւիտեանս,
Շիրակումն աւերակ Մրէն ու Անին։

Այս երգը վերջացնելուց յետոյ Գրիգորը ասաց. «զօրանաս, որդիս, հիմայ ես հաւատում եմ, որ հաստատ Շիրակայ գաւառիցն ես։„ Դորանից յետոյ մի մի բաժակ թէյ խմեցին, հաց կերան եւ Ազատը կամենում էր հեռանալ, երբ Գրիգորը արգելեց, եւ ասաց.— „ես տեսնում եմ, որ գնալու ես, դէհ, մի երգ էլ ասա՛ եւ յետոյ Աստուած հետդ լինի»։ Ազատն էլ հէնց այդ էր ուզում. սազն առաւ եւ սկսեց երգել։—

Անտես չառնես աղաչանքս, սիրելի,
Սար ու ձոր անցնելով քեզ համար եկայ,
Գրաւէ, մօտդ տար խեղճիս, պատուելի,
Հոգիս նուազելով քեզ համար եկայ։

Միշտ երեսիս նայէ, մի՛ կորէ սէրդ,
Աղեղնաձև կամարակապ ունքերդ,
Կարմրիկ ու քաղցրահամ թշերդ,
Դորանց փափագելով քեզ համար եկայ։

Ազատուս պահանջը շատ չէ քեզանից,
Ընեղանաս, իմ սիրելիս, ինձանից,
Դիպչող խօսք դուրս չի գալիս իմ բերանից,
Զօր ու գիշեր տանջուելով քեզ համար եկայ։

Երգի միտքը Գրիգորը հասկացաւ և Սիրանոյշին սենեակից հեռացնել տուեց։ Ազատն էլ խեղճացած՝ Արաբօի հետ միասին գնացին։ Սիրանոյշը տեսաւ, որ Ազատը գնում է՝ շտապեց գնաց այդ ին իւր (ընակարանի) սենեակի դուռը կանգնեց և սպասում էր Ազատու գալուն։ Երբոր Արաբօն և Ազատը հասան այնտեղ, Սիրանոյշին նկատեցին, Սիրանոյշը ներս մտաւ և դուռը գոցեց։ Ազատը մօտեցաւ դրանը, Սիրանոյշը ասաց.—«մինչև մի երգ չասես ինձ համար՝ դուռը բաց չեմ անի»։ Ազատը սազն առաւ ձեռքը և սկսեց գովել նրան հետևեալ երգով.—

Ի՞նչ գովեմ, գովաբանեմ, աննման ես, սիրելի,
Շաղախառն, անձրևաբեր ծիածան ես, սիրելի,
Գարնան բացուած վարդերի պէս բացուել ես ծաղիկներով,
Ծաղիկներիդ միջումը դու գովական ես սիրելի։

Կաքաւի նման գլուխդ թուխ մազերով զարդարած՝
Կամարակապ կեռ ունքերդ ճակատումդ յարմարած,
Թանկագին քաղցր խօսքերդ շարունակուած ու շարուած,
Մարգարիտից գեր ի վերոյ պատուական ես սիրելի։

Սիպտակ կոկոն ծծերդ փայլում են ապակու նման,
Ձեմ դաղարում ես քո սիրուդ, աղուաշ սուրհանդակի նման,
Կտրատում ես խոցուածներս, սուր արած դանակի նման,
Սաստիկ սիրովդ եմ չարչարուում, մէկ ներս տանես սիրելի։

Խաժուժ մաժուժ վառ աչերդ ինձի գերի են արել,
Սպիտակ վզիդ մանեակը գլխիս խելքն է տարել,
Վարդագոյն կարմիր թուշերդ ինձի համար են հասել,
Անտես չառնես աղաչանքս՝ շատ լաւ կանես, սիրելի։

Մաքուր կաթամբ սնուած ես, խիստ պայծառ անուն ունես,
Կառավարիչ, իմաստասէր, ճշտիւ դու խելքի բոյն ես։
Խոր մտածող ճարտարաբան, պառաւած խօսքեր չունես.
Խեղճ Ազատուս նոր զարդարած օթևան ես, սիրելի։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Սիրանոյշը այն բոպէին դուռը բացեց և Ազատուն ներս առաւ, անպատմելի էր երկու սիրահարների առաջին անգամուայ տեսակցութիւնը։ Նրանք միմիանցից ջերմագին սիրոյ համբոյրներ առնելով նստեցին. բաւական երկար խօսելուց յետոյ գնացին պարտէզը զբօսնելու. սկսեցին լաւ լաւ պտուզներ քաղել և ամենաքաղցրը միմիանց հրաւիրել ուտելու։ Օրը արդէն տարաժամել էր. Սիրանոյշը ասաց Ազատուն.—„սիրելի, խնդրում եմ գնաս Արաբօին ուղարկես հօրս մօտ, տեսնենք ինչ կ'լինի մեր ապագան. ես որ կամ պիտի մահանամ՝ կամ իմ նպատակիս հասնեմ»։ Ազատը այս խօսքերը լսելով՝ լաց եղաւ։ Սիրանոյշը հետաքրքրուեց իմանալ պատճառը, բայց Ազատը ոչինչ չասաց և մնաս բարով ասելով գնաց Արաբօի տունը, պատմեց նորան հանգամանքը. նա էլ գնաց Գրիգորի մօտ և նորան ասաց.—«յարգելի պարոն, մի խնդիր ունիմ քեզ յայտնելու և յուսով եմ, որ չես մերժի. անցեալ օրուայ այստեղ եկող աշուղը սիրահարուել է Սիրանոյշի վերայ աստուածային նախախնամութեամբ և Սուրբ Մինասի միջնորդութեամբ, հիմայ ես քեզանից մի պատասխան եմ ցանկանում իմանալ՝ որ գնամ հաղորդեմ նրան»։ Գրիգորն ասաց բարկութեամբ.—„ինչպէս կարելի է խօսք տամ. ով գիտէ, դա ով է, ինչ գործի տէր է„։

Արաբօն ասաց —„իշխանս, այս բանը Աստուած է տնօրինել, պէտք է որ հակառակ չ'կանգնես, ապա թէ ոչ՝ վնաս կ'կրես.»—Գրիգորը մի խոր մտածման մէջ ընկաւ և քիչ յետոյ ասաց.—«եթէ այդպէս է, ես պէտք աղջկաս կամքը հարցնեմ, եթէ աղջիկս կամեցաւ, ես ոչինչ չեմ կարողանայ ասել, ուրախութեամբ հարսանիք կանեմ և իմ ունեցածս էլ կ'կտակեմ նրան»։ Ուղարկեցին Սիրանոյշին կանչեցին.—«հայրը ասաց նրան.—„աղջիկս, դու գիտե՞ս որ բացի քեզանից ուրիշ ոչ մի զաւակ չունեմ, անցեալ օրուայ այստեղ երգող աշուղն ուզում է քեզ առնել, արդեօք կ'կամենաս, եթէ ոչ՝ ահա Արաբօն այդ բանի համար է եկել որ իմանայ։— Սիրանոյշը խոնարհաբար պատասխանեց.— «պատուելի հայրս, եթէ դու ինձի գժոխքն էլ ուղարկես ես պատրաստ եմ»—ասաց և գնաց յուր սենեակը, այնտեղ կանչեց իւր աղախին Հրանոյշին և ասաց.— գնա՛ իմ կողմից հայրիկիս ասա՛, որ եթէ ինձ այն տղային չ'տայ՝ ես իմ կեանքս կ'թունաւորեմ»։ Հրանոյշը գնաց յայտնեց Գրիգորին. որը լսելով այդ բանը, հաւատաց հաստատապէս, որ Աստուծոյ տնօրէնութեամբն է, հետևապէս Արաբօին խօսք տուեց և ծախս պահանջեց եռեսուն քսակ ոսկի։ Արաբօն տուն վերադարձաւ և ճանապարհին պատահեց իրանց գիւղի քահանային, որից

իմանալով՝ որ գնումէ Գրիգորի աղջիկն ուզելու իւր որդուն, բացատրեց նորան որ արդէն վերջացած է ամեն բան, քահանան վերադարձաւ իւր տունը։ Աբրաբոն եկաւ տուն և յայտնեց գործի եղելութիւնը, երբ Ազատը ոսկու պահանջը իմացաւ՝ տրամեց. Աբրաբոն սիրտ տուեց որ չ՝տրամի, Աստուած ողորմած է։ Նրանք սկսեցին հնարներ մտածել։ Թող սրանք խորհեն, մենք ընթերցողին տանենք Սիրանոյշի մօտ։ Սիրանոյշը երբ իմացաւ որ հայրը երեսուն քսակ ոսկի է պահանջել, հասկացաւ, որ փորձելու համար է ասել, ուստի մի մարդ ուղարկեց Ազատուն հասկացնելու, որ ի զուր չ՝տրրամի։ Մի մարդ էլ ուղարկեց իր հօրը ասելու, որ եթէ ստոյգ է պահանջում ոսկիքը, նա իր կեանքին վերջ կ՝դնէ։ Հայրը պատասխանեց, որ անհոգ լինի, այդ փորձի համար է ասել. Սիրանոյշը հաստատ իմանալուց յետոյ մարդ ուղարկեց Ազատուն բերել տուեց, նախ քան նորա գալը ծաղիկներից մի փունջ կապեց և գալուն պէս ուրախ-ուրախ ընդառաջ ելաւ։ Դեռ Սիրանոյշի մօտը չ՝հասած՝ Ազատը պատահեց Հրանոյշին, որը յայտնեց Սիրանոյշի դրուութեան մասին. Ազատը կամեցաւ Հրանոյշի հաւատարմութիւնը փորձել. այդ նպատակով ասաց.—«քոյրիկ Հրանոյշ, այս երեք ամիս է, որ ես իմ տանից ու տեղից դուրս եմ եկել, քար ու

սար ոտի տակ առնելով դիմել եմ Սիրանոյշին, արդեօք դա արժէ.»—Հրանոյշը այլ ևս չ՝կարողացաւ համբերել, մազերի հիւսերից մինը ծառայեցրեց սազի տեղ և երգեց հետևեալ երգը, գովելով Սիրանոյշին։

Նորա գեղեցկութիւնն ինչ է կ՝հարցնես,
Սպիտակ երեսը լուսնին է նման,
Չկայ նորա հատը ի մէջ աշխարհիս,
Եդեմի դրախտի բուսին է նման։

Հագին ունի կանաչ կարմիր ծիրանի,
Տեսնողների ուշքը հաստատ կ՝տանի,
Գովելու է, գովեմ, քեզ է արժանի,
Փակուած ու կնքուած կուսին է նման։

Աչքերն ունքերն իրար համեմատ,
Տեսնողը կ՝մնայ հիւանդ, անփարատ,
Հրանոյշը քեզի մատաղ, ով Ազատ.
Սազիդ ոսկէ թելերն հուսին է նման։

Այս երգից յետոյ Ազատը շատ գոհ մնաց Հրանոյշից և մի ոսկի էլ ընծայ տուեց ու անցկացաւ։ Սիրանոյշը երբոր Ազատուն տեսաւ գալիս է, ծափ տալով վազեց ընդառաջ, ձեռքից բռնեց և ներս տարաւ սենեակ. այնտեղ միմիանց սիրոյ համբոյրներ տալուց յետոյ Սիրանոյշը ասաց Ազատուն,—«սի-

բելի, մի երգ երգէ, ինձ ուրախացրու։— Ազատը առաւ սազը և սկսեց հետևեալ գովեստի երգը.—

Մէկ ժամի չափ դուրս չես գալիս աչքիցս,
Անգին ես, վառվում ես ճրագի նման,
Մէկ անգամ անցել եմ ես իմ կեանքիցս,
Սիրովդ անշէջ ես, կրակի նման։

Խնդրեմ անքակտելի մնայ մեր սէրը,
Քեզի կեանք պարգևէ Եհովայ Տէրը,
Հաստատ ու շէն մնայ քեզ բերող մէրը.
Սպիտակ ու կարմիր ես, փայլակի նման։

Ազատս խնդրում է, որ ներես յատուկ,
Օտարին մի յայտնի, լիող մնայ ծածուկ,
Ամենից անուշ ես, ամենից նազուկ,
Անձիս լուսատու ես, ցերեկի նման։

Երգը վերջացնելուց յետոյ միասին հանգստացան, առաւօտեան շուտ վերկացան լուացուեցան ու Աստուած փառաբանեցին, որից յետոյ Ազատը շատ խոր մտածման մէջ ընկաւ։ Սիրանոյշը ասաց.—սիրելի, իզուր մի մտածիլ, եթէ հայրս ծախսը հաստատ ուզէ, ես կարող եմ պատասխան տալ. ահա ես հարստանաց պատրաստութիւնն եմ տեսնում, որ վաղը գնանք պսակ։ Ազատը փոխարէն բերնով պատասխանելու՝ առաւ սազը և երգեց այս տխուր երգը։

Արի, իմ սիրելի, մէկ պայման անենք,
Իմ խղճալի հայրս գերութեան մէջ է,
Գամ՝ նոր մեր անթառամ պսակը տեսնենք,
Իմ խղճալի հայրս գերութեան մէջ է։

Սիրանոյշը երբ իմացաւ այս տխրալի խօսքերը, մազերի հիւսերից մէկը ձգեց կուրծքի վերայ և սկսեց երգել այսպէս.—

Սիրանոյշը

Տխուր Սիրանոյշին մի տխրեցնէ,
Մի գնա դու, յետոյ կազատենք հայրդ,
Թշնամիքս շատ են, մի խնդացնէ,
Մի երթա դու, յետոյ կազատենք հայրդ։

Ազատը

Զոհեմ արիւնս քեզ համար, Սիրական.
Եղիր կնքած ազբիւր, փակուած բուրաստան,
Յուժարացիր, տուր ինձ ազնիւ պատասխան,
Իմ խճալի հայրս գերութեան մէջ է։

Սիրանոյշը

Սիրանոյշը պիտի ստանայ նոր կեանք,
Նրան ծաղկելու համար դու արա՛ ջանք,

Աւաղ, ուրախ օրս դարձաւ հառաչանք,
Մի երթա դու, յետոյ կաղատենք հայրդ։

Ազատը

Նոր ստացած կեանքիդ մատաղ լինիմ ես,
Հայրս ծուղակումն է, գնալ արժան տես,
Շուտով յետ կդառնամ, մի թափի աղերս,
Իմ խղճալի հայրս գերութեան մէջ է։

Սիրանոյշը

Փոքր ժամանակ տուր ինձի սպասեմ,
Այս օրուանից մինչև գալդ սև հագնեմ,
Գնալուդ համար ես դարձեալ կաղաչեմ,
Մի երթա դու, յետոյ կաղատենք հայրդ։

Ազատը

Ազատն եմ, Սախալին կղզին կգնամ,
Ահա քեզ մէկ տարի ժամանակ, կուտամ,
Աղօթիր առ Աստուած, շուտով յետ կուգամ,
Իմ խղճալի հայրս գերութեան մէջ է։

Սիրանոյշը

Սիրանոյշն եմ, իմ թշնամիքս շատ են,
Վախում եմ, Ազատ, քեզ իձանից գատեն,

Բոզոբոջ տունկս միշտ ուզում են հրատեն,
Մի երթա դու, յետոյ հայրդ կաղատենք։

Երգերը աւարտելուց յետոյ Սիրանոյշը լաց եղաւ և աղաչեց որ չգնայ. բայց Ազատը ասաց, որ անկարելի է, նախ պէտք է հայրս ազատեմ, յետոյ գամ պսակուինք. որովհետև Աստուծոյ տնօրէնութիւնը և սուրբ Մինասի միջնորդութիւնը որ սկզբից տեսել եմ էլ չեմ կարող իմ նպատակը փոփոխել։ Սիրանոյշը տեսաւ որ անկարելի է Ազատուն յետ կանգնեցնել իր մտադրութիւնից, հանեց իւր մետաքսեայ թաշկինակը տուեց Ազատուն և ասաց. — «սիրելիս, ահա իմ թաշկինակը տալիս եմ քեզ, որ ամեն ձեռքդ առնելիս ինձի յիշես և չմոռանաս»։ Ազատը թաշկինակը դրեց ծոցը, կանգնեց և վերջին ողջոյնը տալով Սիրանոյշին դուրս եկաւ սենեակից արտասուալից աչքերով և գնաց Արաբօի տունը, բարև տուեց ու կանգնեց։ Արաբօն ասաց.— «եղբայր, ինչ է քո լացի պատճառը, չլինի՞ Գրիգորի առաջարկած ծախսի համար ես լաց լինում. հոգս մի անի, ես կարող եմ պատասխան տալ»։ Ազատն էլ չկարողացաւ բերնով պատասխանել, վեր առաւ սազը և սկսեց երգել.—

Զատվում եմ սիրելուցս, ինչպէս չողբամ,
Պաշտպանիր, յանձնում եմ քեզ Սիրանոյշին,
Վճռել եմ հաստատ, պէտք է որ գնամ,
Աւաղ, լալով թողի հեզ Սիրանոյշին։

Զունիմ հաւատարիմ բացի քեզանից,
Ձմռանաս ինձի, հանես քո մաքից,
Պէտք է գնամ հայրս ազատեմ վանդակից,
Գալով ուրախացնեմ թէզ Սիրանոյշին։

Սիրանոյշի թշնամիքը բազում են,
Միշտ մնալ խանգարուած՝ նրանք ուզում են,
«Գնաց Ազատին, էլ չի գայ»—ասում են,
Դարձել են ցաւերը դէզ Սիրանոյշին։

Երգը վերջացնելուց յետոյ, վերջին մնաս բարովն ասելով՝ ճանապարհ ընկաւ դէպի Կոստանդնուպոլիս, շատ գնաց թէ քիչ՝ Աստուած գիտէ, ճանապարհին պատահեց մի կանաչազարդ ափերով առուակի, նստեց այնտեղ քիչ հանգստացաւ, դար, ձաւ դէպի Սասուն նայեց, տեսաւ, որ նրա լեռները ամպերով պատուած են, կարծեց թէ Սիրանոյշն էլ դրանց մէջ նստած դէպի իրեն է նայում, էլ չ՝կարողացաւ զսպել և սկսեց լաց լինել, լաց եղած ժամանակը մի ճանապարհորդ պատահեց նրան և ասաց.—„աշուղ, ինչի՞ ես լաց լինում“—Ազատը ասաց.—«կորցրել եմ, լաց եմ լինում». ճանապարհորդը ասաց. „ի՞նչ ես կորցրել“,—Ազատն էլ չը կարողացաւ պատասխան տալ, այլ վեր առաւ սազը և երգեց այսպէս.—

Կորուցել եմ, ման եմ գալիս,
Ձեմ գտնում իմ մխիթարս,
Նորա համար եմ ես լալիս,
Դերի է գնացել հայրս։

Ընտիր է նա ինձ ամենից,
Զրկուել եմ ես նորանից,
Հեռացել եմ տեղից—տանից,
Անհնար դարձաւ հնարս։

Ազատն եմ, շատ ցաւեր ունեմ,
Փրկիչ ու փարատիչ չունեմ,
Անհաստատ գերեզման կըլնեմ,
Սպասում է ինձի մայրս։

Այս երգից յետոյ վեր կացաւ առանց խօսելու շարունակեց ճանապարհը և օրուայ մէկը հասաւ Կոստանդնուպոլիս և մի պատի տակին հովում նըստեց հանգստանալու։ Քաղաքի խաբեբաներից երեք հոգի եկան Ազատու մօտ նստեցին և սկսեցին հարցընել՝ որտեղացի լինելը, ի՞նչ գործով գալը իրանց քաղաքը, և այնպիսի քաղցր լեզու գործ դրին, որ Ազատը իրան մտերիմ համարեց նրանց և սկսեց իւր բոլոր գաղտնիքները պատմել։ Նրանց էլ այդ էր հարկաւոր, իսկ իրանց ցանկալի որսն էր։ Նրանք ասացին Ազատուն, —«թէթէ դու մեզ ճանապարհածախս տաս, քեզ շատ հեշտութեամբ կ՝հասցնենք

Սախալին, և կ'օգնենք քեզ ամեն բանում»։ Ազատը ուրախացաւ և ասաց.—«եթէ դուք ինձ Սախալին հասցնէք՝ ես ոչ միայն ճանապարհածախս կ'տամ, այլ և ձեզ լաւ կ'շահեմ»։ Խաբեբաները ասացին, «դէհ, ուրեմն գնանք մեր պատրաստութիւնները տեսնենք»։

Ազատին հետևեց նրանց։ Նրանք ճանապարհին պատահեցին մի գինետան, և առաջակեցին Ազատուն մտնել այնտեղ մի շիշ գինի խմել. նա համաձայնեց և մտաւ ներս սկսեցին խմել. մի շիշը եղաւ երկու, երեք, միով բանիւ այնքան խմեցին, որ Ազատը արբելով՝ սկսեց գրպանից ոսկիքը հանել և շաղ տալ գինետան մէջ։ Խաբեբաները երբ տեսան, որ Ազատը իւր ունեցած բոլոր փողերը սպառեց, խորամանկութեամբ թողին նրան անպաշտպան և անյայտացան։ Ազատը վայր ընկաւ գինետան մէջ բաց քնեց։ Գիշերուայ կէսին զարթնեց, տեսաւ, որ շատ վատ դրութեան մէջ է, սաստիկ մրսել էր. նա ձայն տուեց ընկերներին.— «Սարգիս, Սիմոն, Կարապետ», բայց ոչ մի պատասխան չ'ստացաւ. նա իսկոյն հասկացաւ իր խաբուիլը, և սկսեց լրջանալ և խոր մտածմանց մէջ ընկնել։ Մի կողմից Սիրանոյշի ցաւը և խաբեբաների արածները, և միւս կողմից իրեն գերդաստանի դրութիւնը անտանելի կերպով խոցուեց և քաշ-

ուելով մի անկիւն սկսեց դառնապէս ողբալ իր թշուառութեան վերայ. դորա հետ միասին անտանելի դարձրեց նորա դրութիւնը իր հիւանդութիւնը։ Գինեվաճառը մի բարեխիղճ մարդ լինելով՝ մի ձեռք անկողին տուեց և նա մի ամբողջ ամիս հիւանդ պարկեց, և հաղիւհաղ լաւացաւ։ Աչքերը բաց արեց և առաստաղին նայելով չէր իմանում թէ որտեղ է և ինչ դրութեան մէջ է. կռունկների խումբը վերևից անցնելիս նրանց ձայնը ընկաւ ականջը, նոր ուշքի եկաւ և իրան ժողովեց, միտք բերեց իւր գլխի արկածները, սաղը վայր բերեց, նոր թելեր քցեց, լարեց և սկսեց երգել այսպէս.—

Կռունկ, արդե՞օք ուր կգնաք,
Ինձի հօրիցս լուր բերէք,
Երբ Կոստանդնուպոլիս կուգաք,
Ինձի հօրիցս լուր բերէք։

Երբ երթաք Սախալին կղզին,
Մեղք կ'դնեմ ես ձեր վզին,
Երբոր կապանքները խզեն,
Ինձի հօրիցս լուր բերէք։

Ազատս խնդրեց ձեզանից,
Բարև կ'տանէք ինձանից,
Զունիմ մէկ լուր ես իրանից,
Ինձի հօրիցս լուր բերէք.

Այս երգից յետոյ գիշերը վերայ հասաւ, հանդարտ քնեց։ առաւօտեան վերկացաւ իրեն բոլորովին առողջ գտաւ, շրջերը հագաւ, լուացուեց, Աստուած փառաբանեց, մի քանի օր գինետան մէջ մնաց, մի քանի ոսկի ընկաւ ձեռքը, վերցրեց սազը և գինեվաճառին շնորհակալութիւն տալով՝-մնաս բարով-ասաց։ գինեվաճառը արգելեց նրան ասելով «եղբայր։ ես տեսնում եմ, որ գնալու ես, մի երգ էլ երգիր և յետոյ գնա, Աստուած հետդ լինի»։ Ազատը վեր առաւ սազը և սկսեց երգել.—

Հեռու կաց կախարդ մարդկանց քաղցր լեզուից, հեռու կաց,
Բերանումը սանձ չ՝պահող ընկերիցը հեռու կաց,
Խաբեբայքն ի սրտի իւրեանց ասեն—ոչ գոյ Աստուած,
Պատիժ կուգայ քեզ նրանցից միշտ, պատուից հեռու կաց։
Եղած չեղածս կողոպտին, մնացի մերկ Յոբի պէս,
Վիրաւորեալ անձիս նորից տուեցին վերք Յոբի պէս,
Խեղճութեանս չ՝նայելով արինավէրք Յոբի պէս,
Քեզի ընկեր ձևացող ներքնադրծիցը հեռու կաց։

Դու էլ չ՝ընկերանաս այդպէս կախարդ մարդկանցը
Հիւանդութեան մէջ էլ քցին խղճուկ Ազատուն։

Գրպանիցս հանել տալով՝ անտեղ վատնեցին գանձը,
Ես խաբուեցայ, դու չ՝խաբուիս, մօտներիցը հեռու կաց։

Երգիցը յետոյ շնորհակալութիւն յայտնեց և դուրս եկաւ փողոց, մի մարդու հարցրեց.—«ո՞ւմ սրճարանումն են հաւաքվում երգեցողութեան համար». նա ասաց.—Վահան Սանթուրջեանի»։ Ազատը հարցնելով գնաց գտաւ, ներս մտաւ, բարևեց և նստեց. քիչ յետոյ մէկը նստողներից ասաց.—«աշուղ, մի երգ ասա՛ մահուան վերայ»։ Ազատը սկսեց երգել։

Պէտք է փնտռենք, գտնենք հնար աշխարհի մահուան համար,
Տէրը մէկ օր կուգայ ատեան գումարի մահուան համար,
Զարի կամքին միք հետևի, դէպի կորուստ կը տանի,
Եղէք մշտական խրատիչ տկարի, մահուան համար։
Բարի արէք դուք միշտ նրանց, որ ձեզ կ՝կամենան չար,
Ծոյլ մի լինէք աղօթքիցը աչքով կոյր, մտքով խաւար.

Զարը կուզենայ, որ մեզի տանէ գեհենուն աւար,
Ուղիղ ճանապարհը լաւ է, հաս, արի հահուան համար։

Մեծ է զօրութիւնը Տիրոջ, ով որ փնտռէ կըգտնի,
Փափագը անկատար կասեմ, նա գերեզման չի մտնի.
Ով Ազատ, նեղ վիճակի մէջ ես, Տէրը քեզ օգնի,
Տիրոջմով քեզ ազատութիւն հնարիր մահուան համար։

Երգը վերջացնելուց յետոյ սրճարանում եղողները շնորհակալութիւն յայտնեցին նրան և մի մի ոսկի տալով՝ դուրս ելան, Ազատն էլ վեր առաւ իւր ճանապարհի ծախսը, իսկ միւսը ընծայեց սրճարանի տիրոջը և շնորհակալութիւն տալով դուրս եկաւ Կոստանդնուպօլսից մտաւ նաւ և Միջերկրական ծովով, Կարմիր ծովով, Արաբական ծովով, Հնդկական ովկիանոսով գնաց Չինաստան. այնտեղից էլ հասաւ Սախալինի սահմանը։ Թողնենք Ազատուն Սախալին, ընթերցողին տանենք դէպի Պետերբուրգ. մեր այժմեան գոստափառ կայսեր Օծման ժամանակն էր. Օծման առթիւ ամենազորմած կայսրը հրովարտակով արձակել տուեց բանտարկեալներին. արձակուածների մէջն էր և Ազատու Հայր Սուրէնը, որը ազատուելով և ճանապարհ ընկնելով դէպի հայրենիք՝ յանկարծ պատահեց Ազատուն, տեսաւ մէկ երիտասարդ աշուղ, սազը քամակին՝ գնում է դէպի Սախալին. արիւնը եռաց, սիրտը մի կասկած ընկաւ. ուշի ուշով նայեց տեսաւ ձեռքին իւր նկարը, զարմացաւ և մոքումը ասաց.— այս իմ Ապրես որդին կ'լինի, բայց չեմ ճանաչում, որովհետև ութ տարեկան ժամանակն եմ տեսել, խօսեցնեմ, կարելի է խօսքի միջով մի բան հասկանամ— և ասաց.— «որդիս, ո՞ւրտեղացի ես». Ազատը պատասխանեց.— «Ենրակայ 'գաւառիցն եմ, Հայր—Յարթիկ գիւղացի՝».— ո՞ւր ես գնում,— Սախալին»— Ինչո՞ւ համար.—

—Իմ հայրս գերութեան մէջ է, գնում եմ ազատելու Աստուծոյ հրամանաւ և սուրը Մինասի միջնորդութեամբ»։

—Սուրէնը ասաց.— քո հայրդ ո՞վ է.

—Իմ հայրս Սուրէնն է։

Սուրէնը փորձելու համար ասաց — "Հա՛, ես գիտեմ, նա լաւ մարդ էր, Աստուած ողորմի հոգուն, այս երեք ամիս է որ մեռել է։" երբ Ազատը լսեց այս, խելքը գլխիցը թռածի նման սազը առաւ և սկսեց երգել այս ողբալի երգը.—

Ո՜հ, իմ սիրտս խոցոտեցիր նիզակաւ,
Այդ ի՞նչ վատ համբաւ լուր տուիր ինձի,
Կտրատեցիր երակներս անիրաւ,
Անձիս վնասելու սուր տուիր ինձի։

Սրտիս մէջը դրիր վառուած հնոցը,
Դրմբելով արթնացուց անդարման բոցը,
Կեանքիս տերևն այրեց, սաստկացաւ բոցը,
Լեարդս կերակրելու հուր տուիր ինձի։

Մանկութիւնից բնաւ լաւ օր չը տեսայ,
Արտասուքն աչքերէն արիւն կը հոսայ.
Արի դուն Ազատուս ճշմարիտն ասա՛,
Այդ լուրն ինձ արժան չէր, ո՞ւր տուիր ինձի։

Երգը վերջացնելուց յետոյ ուշաթափուեց, վայր ընկաւ, Սուրէնը զգջաց իւր ասածիցը, ձեռքի փայտը արաւ սաղ, և երգեց այս երգը։

Ո՜հ, իմ որդիս, սիրուն որդիս,
Ձե՛ս ճանաչում, ես քո հայրդ եմ,
Բա՛ց քո անուշ լեզուն, որդիս,
Ձե՛ս ճանաչում, ես քո հայրդ եմ։

Ազատը երբոր լսեց «ես քո հայրդ եմ» վեր կացաւ տեղիցը, սաղը առաւ ձեռքը ու սկսեց երգին պատասխանել այսպէս.—

Ո՜հ իմ հայրս, ազնիւ հայրս,
Ձեմ տեսած, ի՞նչպէս ճանաչեմ,
Ժամանակդ էր անթիւ, հայրս,
Ձեմ տեսած, ի՞նչպէս ճանաչեմ։

Սուրէնը բանտում Արփենիկի մասին շատ վատ երազ էր տեսել, մտածեց որ երգի մէջ յայտնէ և ճիշտը իմանայ՝ երգեց այսպէս.—

Ս ո ւ ր է ն ը

Հետդ բերել ես նկարս,
Ինչո՞ւ թողիր եկար մայրս,
Ի՞նչպէս է իմ Արփենեակս,
Ձե՞ս ճանաչում, ես քո հայրդ եմ։

Ա զ ա տ ը

Հանգչեցաւ սրտիս կրակը,
Կատարուեց իմ նպատակը,
Քեզ կ'սպասէ Արփենեակը,
Ձեմ տեսած, ի՞նչպէս ճանաչեմ։

Ս ո ւ ր է ն ը

Սուրէնն եմ, պատուում խաբեցին,
Ցքի կամ գինի թափեցին,

Սամսոնի նման կապեցին,
Ձեռ ճանաչում, ես քո հայրդ եմ։

Ա ղ ա ղ ը

Ով որ քեզ խաբեց՝ կեղծ սրտով,
Կը գտնի պատիժն Աստուծով,
Ազատս ուրախ քեզանով,
Ձեմ տեսած, ինչպէս ճանաչեմ։

Երգը վերջացնելուց յետոյ միմիանց ճանաչելով փաթաթուեցան ու ջերմ կերպով համբուրուեցին, և սկսեցին միմիանց պատմել իւրաքանչիւրը իւր գլխին պատահածները, և սկսեցին ճանապարհ ընկնել դէպի Սասուն։ Թող սրանք շարունակեն իրանց ճանապարհը, մենք ընթերցողին տանենք Սիրանոյշի մօտ։ Այն ժամանակն էր, երբ Օսմանցոց կուսակալները սկսել էին շատ նեղութիւն տալ խեղճ Սասունցոց, որոնք սաստիկ ճնշուելով ու գըրկանքներ կրելով՝ սկսեցին կռուել նրանց դէմ, Օսմանցիք էլ լարեցին քիւրդերին, որոնք լցուելով գիւղերը՝ անխնայ կերպով կեղեքում էին հայերի տները. հայերն էլ վրէժխնդրութեամբ լցուած՝ ելան քիւրդերի դէմ և մեծ ջարդ տուին նրանց։ Այս լուրը հասնելով Սուլթանին, նա մեծ զօրք ուղարկեց Սասուն, Թէյլիմ փաշայի հրամանատա-

ութեան տակ, որը գալով Սասուն սարսափելի կոտորածներ արեց, այրեց գիւղերը և ամբողջ Սասունը գրեթէ անապատ դարձրեց։ Հայերը վերջին անգամ հաւաքուեցան միասին և պատրաստուելով ելան թշնամու դէմ։ Հայերի թիւն էր հազար հոգի, որոնց հրամանատարն էր Գրիգոր զօրավարը, որը զօրքը չորս մասի բաժանելով մի մասը յանձնեց քաջ Արաբօին, մի մասը Լևոնին, միւս մասն էլ Կրը պօին, իսկ չորրորդ մասը ինքն առաւ և սկսեցին պատերազմել։

Ամբողջ տասն և վեց օր կռուեցին, բայց իզուր անցաւ հայերի քաջութիւնը, որովհետև պաշար չունէին, ոչ հացի և ոչ զէնքի, յաղթուեցան և ընկան Օսմանցոց ձեռքը, որից յետոյ տաճկաց զօրքերը կատարեցին իրանց բարբարոսութեանց պակասները. անխնայ կոտորածներ արեցին, առանց հասակի և դասակարգի խտրութեան։ Նրանք շատ էին ցանկանում հայոց զօրավարտ Գրիգորին գերի բռնել, բայց չկարողացան որովհետև Գրիգորը ինքն իրան սպանել էր, որպէսզի չընկնի թշնամու ձեռքը, իսկ քաջ Արաբօն շտապեց գնաց Սիրանոյշին փախցրեց Պարսկաստանի Մագու գիւղաքաղաքը Թէմուր խանի տունը։ Թէմուր խանը տեսնելով Սիրանոյշի գեղեցկութիւնը ասաց իր մտքում. «այսպիսի գեղեցիկ աշխարհում չի ճարուի. ես սորան

կառնեմ ինձ հարսնացու» և այս գիտաւորութեամբ հարցրեց Սիրանոյշին—«աղջիկս, նշանուած ես թէ ոչ»։ Արաբօն առաջ գալով ասաց. «յարգելի մեծ խան, այո, նշանուած է մի աղայի հետ. որը գնացել է Ռուսաստան աշխատելու համար; բայց աղայի և աղջկայ մէջ ուխտադրութիւն կայ երեք տարի ժամանակաւ»։ Խանը երբ իմացաւ այդ բանը ասաց.—«աղջիկս, անհոգ կաց, ես քեզ կ'պահեմ ինչպէս իմ հարազատ աղջիկը, մինչև որ կ'գայ քո նշանածը»։

Սիրանոյշին մի առանձին սենեակ տուեց և երկու հատ էլ աղախին։ Սիրանոյշը գնաց իւր սենեակը և կանչեց Արաբօին և մէկ նամակ գրեց և նամակի վերջում տեղ թողնելով՝ գրիչը տուեց Արաբօին և ասաց նրան.—«ինչ որ քեզ կասեմ, այն էլ գրիր։ Առաւ ջութակը և երգեց այսպէս.—

Մատաղ լինիմ քեզի, Ալամ եղբայրս»,
Շտապով հասցուր իմ նամակս Ազատուն,
Պատմիր դու նորան մէկ առ մէկ իմ ցաւս,
Մարել կտաս անշէջ կրակս Ազատուն։

Պատմիր անիրաւ թշնամու արածը,
Կոտորել են խեղճ նորահաս մանկանցը,
Պարգև է եղել ինձի անվերջ լացը,
Մէկիկ-մէկիկ պատմիր տանջանքս Ազատուն։

Բացուան թնդանօթները չորս կողմիցը,
Զայրացել էր օդը մթի ձեռքիցը,
Սիրելիս գցել է ինձի մտքիցը,
Գտիր, իմ քաջ սուրհանդակս, Ազատուն։

Սիրանոյշն եմ, ծերացայ ախ քաշելով,
Այլոց ձեռքին տուչորուելով ու լալով,
Դնա գտիր իմ սիրելիս մանգալով,
Վառել տուր իմ մարած ճրագս Ազատուն։

Երգը վերջացնելուց յետոյ կնքեց նամակը իր մատներով, տուեց Արաբօին և ազաչեց, որ շուտով հասցնէ։
Արաբօն նամակն առաւ և մնաս բարով ասելով՝ ճանապարհ ընկաւ դէպի Կոստանդնուպոլիս, ինչպէս առաջուց Ազատը նորան ասել էր իր ճանապարհորդութեան մասին։ Արաբօն այն ժամանակ, հասաւ Կոստանդնուպոլիս, երբ Ազատը և Սուրէնը դուրս էին եկել քաղաքից. նրանք մի օրուայ ճանապարհ գնալով՝ հանդիպեցին մի ցամաք առուակի, Սուրէնը ասաց,—«որդեակս, առուակի հետ վերև գնանք, կարելի է թէ ջուր լինի, ծարաւութիւնը արդէն ինձ յաղթել է»։ Ազատը ասաց.—«թող քո կամքդ լինի» և բարձրացան վեր և պատահեցին ջրին, նստեցին, խմեցին կերան և մութը ընկնելով այդտեղ գիշերեցին։ Ամառուայ քաղցը

գիշերներից մէկն էր. տեղը ծաղկաւէտ, անուշահոտութեան բուրմունքներից արբենալով հայը և որդի շատ քաղցր քնեցին։ Թող դրանք այդտեղ քնեն. մենք ընթերցողին տանենք Աարաբօի մօտ։ Արաբօն մտնելով Կոստանդնուպօլիս սկսեց սրճարանները հարցնել Ազատուն. վերջապէս գտնելով Վահան Սանթուրջեանի սրճարանը՝ հարցրեց Ազատուն. Սանթուրջեանը ասաց—«այո՝, Ազատ անունով մի աշուղ եկել էր սորանից չորս ամիս առաջ, նա գնաց Սախալին իւր հօրը բերեց և մէկ գիշեր էլ այստեղ մնալով՝ անցեալ օրը գնաց դէպի Սասուն»։ Արաբօն երբ այս իմացաւ, խելքը գլխից թռաւ, ելաւ սրճարանից և շարունակեց ճանապարհը դէպի Սասուն։ Այժմ դանք Ազատուն. Ազատը քնեց, զարթնեց, լուացուեցաւ, աղօթեց և մօտենալով հօրը ձայն տուեց, բայց հայրը սաստիկ յոգնած լինելով չ'զարթնեց։ Ազատը տեսաւ որ չի զարթնի, առաւ սազը և երգեց այսպէս.—

Բաւ է քնես, զարթիր, գովելի հայրիկ,
Ճանապարհորդները եկան գնացին,
Մեզանից անցկացան թէ մեծ թէ պստիկ,
Ճանապարհորդները եկան գնացին։

Սպասում է Սիրանոյշը անհամբեր,
Ոչ օգնական ունի և ոչ գտած տեր,

Ցերեկ եղաւ օրը, քաջալերուի, վեր,
Ճանապարհորդները եկան գնացին։

Վեր կաց կանգնիր, հասնենք մեր նպատակին,
Որ չուրախանայ անգութ թշնամին,
Սիրանոյշի սէրըն վառեց Ազատին,
Ճանապարհորդները եկան գնացին։

Այս երգի ժամանակ Արաբօն մօտեցել էր առուակին. վերջին բառերը որ ընկան ականջը՝ կանգնեց և սկսեց աւելի լաւ ուշադրութեամբ ականջ դնել, բայց ոչ օք չերևաց. առուակի հետ վեր բարձրանալով տեսաւ մի գլուխ, աւելի ևս մօտենալով սազի ծայրն էլ տեսաւ և մի քիչ էլ մօտ գնալով Ազատը գլուխը բարձրացրեց և տեսնելով Արաբօին, տեղից վեր թռչելով, վազեց ընդ առաջ ասելով—„ո՜հ, Արամ եղբայրս“. նրանք փաթաթուեցան և սկսեցին միմեանց ջերմ համբոյրներ տալ։ Արաբօն հարցրեց թէ „ո՞ւր է Սուրէն հայրիկդ“. Ազատը ասաց.—„ահա ծաղիկների միջում քնած է“։ Յետոյ Արաբօին հարցրեց. „էհ, եղբայր ջան, ինչ բարի լուր ունիս“.—Արաբօն հանեց նամակը տուեց. Ազատը բաց անելով կարդաց, հանգամանքը իմանալով՝ արտասուելով ասաց.—„ախ երանի թէ այս նամակի փոխանակ մի բաժակ թոյն բերէիր, „և այս ասելով բարձր ձայնով լաց եղաւ.

լացի ձայնը հասնելով Սուրէնի ականջին՝ զարթնեց, վերկացաւ և ասաց.—„որդիս, ինչո՞ւ կուլաս. այս երիտասարդը ո՞վ է“։ Ազատը լալագին ասաց.—„այս այն է, որի մասին միշտ քեզ պատմում էի“. յետոյ նամակը տուաց հօրը. հայրը կարդաց և երբ այս տողերին հասաւ—“Սիրելի Ազատ, հասիր օգնութեան, որ իմ շէն սիրտս անիրաւ օսմանցին աւերեց, և իմ հայրս սպանուեց պատերազմի դաշտումը, ես էլ գաղթել եմ Պարսկաստանի Մագու գիւղաքաղաքը Թէմուր Խանի տանն եմ։“—Ազատը չկ՚արողանալով համբերել՝ ցաւի կսկծիցը սազը ձեռքըն առաւ և սկսեց երգել։

Կրկին սիրտս կրակ ընկաւ, հայրիկ ջան,
Անուշ սիրեկանիս գերի են տարել,
Աւերուել է բոլոր Սասուն, Հայաստան,
Ազնիւ հոգեկանիս գերի են տարել։

Ով անգութ թշնամի, անխիղճ, անօրէն,
Ինչո՞ւ այդպէս քանդիր Հայաստան շէն,
Ես այնպէս եմ հասկանում այս նամակէն
Սիրուն Սիրանոյշիս գերի են տարել։

Ազատ, Սիրանոյշը գերի է ընկել,
Աղերսելով մեզի նամակ է գրել,
Խնդրել է օգնութեան շուտով հասնել,
Հեզիկ Արփենիկիս գերի են տարել։

Երգը վերջացնելուց յետոյ ասաց.—„հայրիկ ջան, վեր կացէք գնանք“։ Ընկնելով ճանապարհ հասան Սասուն դաշտը, Ազատը ասաց.—«տեսնո՞ւմ էք, կարծես Սիրանոյշը տրտում տխուր մեզ է նայում. կացէք մի երգ ասեմ՝ նոր գնանք»—առաւ սազը և սկսեց երգել այսպէս։

Բաղդիցդ զրկուած, ով այրի տիկին,
Մնացին որբերդ վայրի, Հայաստան,
Այգիներդ այրին, գիւղերդ աւերին,
Քեզ փրկութիւն էլ ո՞վ ճարի, Հայաստան։

Վարդ կարմիր վանքերդ սգով մնացին,
Եկին շատ իշխաններ, ոչինչ չօգնեցին,
Մատաղ մանուկներդ արնով զոհուեցին,
Յոյսդ է մնացել Թերի, Հայաստան։

Նրանց հանդէպ մի բլուր կար, որը շատ նման էր Մասսին, անունը դրել էին Արարատ. Ազատը նայեց Արարատին և երգեց այսպէս։—

Խեղճ Ազատը քեզ կնայէ, Արարատ,
Սև քողով փաթաթուած, վերքերդ անվարատ,
Այս ի՞նչ դառն օրեր, վիճակներս վատ,
Գնացին քաջերդ գերի, Հայաստան։

Այս երգից յետոյ ճանապարհները շարունա-

կեցին և երեք ժամից յետոյ Հասան Շէնիկ գիւղը. Ազատը դառնալով ասաց Հօրը և Արաբօին.— „գնանք Սիրանոյշի այգին, գուցէ մի նշան գտնինք որից ես կարօտս կառնեմ“։ Գնացին այգին տեսան վարդերը թառամած, ծառները կոտրըտած, Սիրանոյշի սենեակը քանդուած՝ որտեղ գիշակեր ագռաւներն էին ել ու մուտ անում։ Ազատը այս դրութիւնը տեսնելով չ՝կարողացաւ համբերել, վեր առաւ վազը և երգեց այսպէս.—

Խեղճ բուրաստանի ծաղիկը
Բացուեց ու շուտով թառամեց,
Առանց պաշտպան տերևիկը
Բացուեց ու շուտով թառամեց։

Կարծես թէ խաշել է քամին,
Տեսէք անխիղճ այգեպանին,
Ծծեց արիւնը արմատին,
Բացուեց ու շուտով թառամեց։

Տես բազէի մտածմունքը,
Չեղխութեամբ իր արարմունքը՝
Արմատախիլ արաւ տունկը
Բացուեց ու շուտով թառամեց։

Ազատը մաքրեց խոսքերը,
Զարաչար սոխակի սէրը,

Վարդին հով բռնեց թևերը,
Բացուեց ու շուտով թառամեց։

Երբ կ՝զարթնի քնած մարդը,
Տեսնի կողոպտած իր զարդը,
Սոխակին սիրահար վարդը
Բացուեց ու շուտով թառամեց։

Երգից յետոյ Արաբօն ասաց.“եղբայր, գնանք մեր այգին, մի ամիս կ՝լինի որ չեմ տեսել“. այնտեղ էլ գնալով միևնոյն տեսարանը ներկայացաւ նրանց առաջ և Ազատը չ՝դիմանալով՝ սազն առաւ և երգեց այսպէս.—

Ցրտիցը, ով արև, թոռչնեցաւ բոյսդ,
Մէկ ժամ իրանց մօտը հիւր կ՝խնդրեն,
Նորանց վերայ ծագէ անթառամ լոյսդ,
Ցրտերի աշխարհին ցուրդ ջուր կխնդրեն։

Անուշահոտ վարդերդ անտէր մնացին,
Գայլ ագռաւի ձեռքը աւար գնացին,
Կանգնեցրու արմատիս մէկ բոյս նորածին,
Այգեպան պարտիզին տուր կ՝խնդրեն։

Անգութ բազէն իրան տէր է ճանանչէ,
Կապասէ, որ այգուս բուսը կանանչէ,
Մի վախիլ, Ազատ, համարձակ հնչէ,
Քունաւոր փուշերուն սուր կ՝խնդրեն։

Երգը աւարտելուց յետոյ մարմոքալով ճանապարհ ընկան դէպի Պարսկաստանի Մագու գիւղաքաղաքը. ճանապարհին պատահեց այն քահանան, որ առաջուց Սիրանոյշին ուզում էր իր տղային, երբ իմացաւ Սիրանոյշի Պարսկաստան գնալը, գընաց տեղը իմացաւ և վերադարձաւ, որ տղային տանի պսակէ։ Քահանան հարցրեց Ազատուն.—„որդիս, ո՞ւր ես գնում». Ազատը ասաց.—„գնում եմ Սիրանոյշի մօտ». նա ասաց. „ես այնտեղից եմ գալիս, և քաջ տեղեակ եմ, որ Թէմուր խանի տղան նորան տարաւ Շամ քաղաքը իրեն կնութեան„։ Երբոր այս լուրը իմացան՝ մնացին մոլորուած և միմիանց ասացին «գնանք Շամ,» մանաւանդ Ազատը արտասուելով ասում էր. պէտքէ գնալ. նրանք ճանապարհը շարունակեցին դէպի Շամ։ Քահանան տեսնելով նրանց խաբուիլը, ուրախ ուրախ գնաց դէպի իւր տունը, բայց ճանապարհին աւազակները հանդիպելով նորան սպանեցին։

Ճանապարհորդները հասնելով Շամ, սկսեցին հարց ու փորձ անել Սիրանոյշի մասին, բայց ոչինչ չկարողացան իմանալ, վերջապէս պատահեցան Սասունցի Լեւոնին, որը հաստատապէս հերքեց, որ սուտ է այդ լուրը և ով որ ասել է ձեզ՝ խաբել է, անպատճառ թշնամի է եղել։ Ազատը նոր ուշքի եկաւ և հասկացաւ քահանայի չարութիւնը և սկսեց ծածուկ երգել այսպէս.—

Բաղմացել են թշնամիքս,
Ուրախութեան տէր են դարձել,
Լացով կոծով իմ տարիքս
Սրտիս մէջ վէրքեր են դարձել։

Լրացաւ պայմանիս տարին,
Ինչո՞ւ հաւատացի չարին,
Խնդրեմ նա կատարէ բարին,
Կախարդ հրաւէր են դարձել։

Ազատուս ցաւերը շատ է,
Յուսանք որ տէրը փարատէ,
Կեղծ հոգուն լսելը վատ է,
Միշտ չարութեան մէր են դարձել։

Այս երգից յետոյ գնացին մի սրճարան մտան, ողջունեցին, այնտեղ եղողները ընդունեցին սիրով նրանց ողջոյնը և տեղ ցոյց տուին նրանց, նրանք երեքը միասին նստեցին, նստողներից մէկը հարցրեց Ազատուն,— "եղբայր, գտա՞ր կորցրածդ„. մի ուրիշը հարցրեց թէ „ինչ է կորցրածը, Ազատը այլևս չպատասխանեց և սազը առնելով սկսեց երգել այսպէս.—

Անյաջող վիճակում տխուր և տրտում
Եօթնարփեան պսակով թագ եմ կորուցել.

Վէրքերս վշտերս, ցաւերս եմ հոգում,
Թանկագին ադամանդ ակ եմ կորուցել։

Անիրաւ թշնամին դռներս պատեց,
Քաղցրաձայն սոխակն վարդիցը զատեց,
Կեանքիս բողբոջ արմատները հրատեց,
Ծուղակով բռնած թռչակ եմ կորուցել։

Խնդրեմ վերանալ քո սուգդ, Ազատ,
Ճանաչէ օտարին և քուկդ ազատ,
Պինդ բռնէ թշնամուն բազուկդ ազատ,
Սիրտ կտրատող սուր դանակ եմ կորուցել։

Սրճարանի միջի մարդիկը ասացին.— աշուղ, քո ման գալածդ այստեղ չէ, եթէ այստեղ լինի մենք կարող ենք գտնել։ Սասունիցը տեղեկութիւն ունէս, դու այնտեղից ասա թէ ինչ դրութեան մէջ է.—«Ազատը իբրև պատասխան երգեց այս երգը.—

Ձեզ պատմեմ Սասունի անցքերը, լսէք,
Ծախեցէք զարդերդ, ղրկեցէք Սասուն.
Շատ նեղութեան մէջ է, երթալ թէ կուզէք՝
Վերցրէք խաչերդ, գնացէք Սասուն։

Նորահաս կոյս աղջիկները լկեցին.
Մատաղիկ մանուկները նիզակեցին,

Բնիկ ժողովուրդը տեղից վանեցին,
Կեանքերդ մատղեցէք, փրկեցէք Սասուն։

Ծաղկեալ պարտէզները խանգարուել են,
Երգող սոխակները միջէն զատուել են,
Գայլ ագռաւների ձեռքն յանձնուել են,
Շտապով գնացէք ազատէք Սասուն։

Այս երգը երգելիս քաղաքի տաճիկ ոստիկանները իմանալով՝ ներս մտան Ազատուն բռնեցին տարան բանտարկեցին։ Սուրէնը և Արաբօն շատ չարչարուեցան, բայց ոչ մի հնար չ՝կարողացան գտնել ազատելու, մնացին շուարած, Սուրէնը ասաց,—«Արամ, առ այժմ գնանք Սիրանոյշին գըտնենք տանենք մեր տուն, տեսնենք յետոյ Աստուած ինչպէս կանէ վերջերս. ես այնպէս գիտեմ, որ մեր ստեղծողը իր ստեղծածին չի կորցնէ, միշտ խաւարում չի թողնի, այլ մի օր լոյս կ՝ծագէ նորան։ Այս ասելով նրանք գնացին մի պանդոկ, գիշերը մնացին այնտեղ, որ առաւօտեան ճանապարհ դնան։ Անդէն Ազատու բանտում մնալուց չորս ամիս անցել էր. հէնց այդ գիշերը Ազատը խիստ մտածութեան մէջ ընկնելով, հառաչելով ձեռքը ձգեց շղթաներին սազի փոխանակ, և սկսեց երգել այսպէս.—

Երիտասարդ հասակումս
Կեանքս մաշեց նեղութիւնս,
Շատ ցաւեր ունիմ սրտումս,
Փարատէ զիս, ով ստեղծող։

Մութ բանտի միջում կուչ եկած,
Օրըս լալիս եմ խաւարած,
Ոտքերս շղթայով կապուած,
Արձակէ զիս, ով ստեղծող։

Բարեխօսեա, Սրբուհի Կոյս,
Անդարման ցաւես ծագէ լոյս,
Հանել ի բանտէս խեղճ գերոյս.
զատէ զիս, ով ստեղծող։

Այս երգից յետոյ քնեց, յանկարծ սաստիկ դղրդիւն ընկաւ բանտի մէջ, որից և զարթնեց, տեսաւ բանտի դռները բացուած, բանտապետները ուշաթափուած վայր են ընկել գետին. Ազատը մնաց մոլորուած, երկիւղից չէր իմանում ինչ ասելը. այդ ժամանակ մի ալեզարդ ծերունի մօտեցաւ Ազատուն և ասաց,—„ա՛յ մարդ, ինչո՞ւ ես կանգնել, թո՛ղ շղթաներդ և գնա՛, այս բոլորը Աստուած քո ազատութեան համար արեց„։ Իսկոյն շղթաները փշրուեցին և Ազատը ազատ ու համարձակ դուրս եկաւ բանտից և ճանապարհին պատա-

հեց մի ծառի, որը նոր գարնան հոտ էր առել, սկսել էր նորաբողբոջ տերևները արձակել. Ազատը ասաց.—«խղճալի ծառ, ինչպէս որ ես բանտիցն եմ ազատուել, այնպէս էլ դու ձմռան ճանկից ես ազատուել, դէհ մի փոքր քո կատարովդ հով արա՛ ինձ հանգստանամ»։ Նա նստեց այդ ծառի տակին և վրան թմրութիւն գալով քնեց։ Թողնենք նրան քնած և գանք Սուրէնին և Ազատուն։ Երբոր լոյսը բացուեց, նրանք վեր կացան տխուր և տրտում հեռացան պանդոկիցը և միմիանց հետ խօսելով գնում էին. յանկարծ աչքերը վեր բարձրացրին տեսան մի ծառ և տակին մի մարդ քնած, մօտեցան և ճանաչեցին, որ Ազատը է, ուրախութիւններից քիչ մնաց որ խելքները թռցնէին, յետոյ հարցրին հանգամանքը, Ազատն նորանց պատմեց ասելով-—«Աստուծոյ մօտ անհնարին բան չ՚կայ, եթէ միայն իւր բարի կամքը լինի»։ Նրանք շարունակեցին ճանապարհները դէպի Մագու. ճանապարհին Ազատը պատահեց իր վաղեմի ընկեր Ռուբէնին, որի հետ միասին կարդացել էին ուսումնարանում։ Ռուբէնը ասաց.—„Ազատ եղբայր, երկու տարի է, որ օտարութեան մէջ ես ու նպատակներիդ ես աշխատում, չէ՞ որ պէտք է տանեցոցդ էլ մտաբերես, նրանք քեզ սպասելով հալ ու մաշ եղան»։ Ազատը այս լսելով սիրտը շարժուեց, սազը առաւ և սկսեց երգել այսպէս.—

Խնդրեմ մեր տունը երթաս ուրախ ժամու,
Գտայ հայրս, միայն սիրելիս կորաւ,
Երթալս Մագու է, իսկ գալս Շամու,
Գտայ հայրս, միայն սիրելիս կորաւ։

Հանգստութիւն չունիմ մէկ ժամ, մէկ վայրկեան,
Այնքան պիտի ման գամ, գտնեմ սիրական,
Ման եմ գալիս, ոչ մեռած եմ, ոչ կենդան,
Գտայ հայրս, միայն սիրելիս կորաւ։

Մեզանից բարև տար մեր ծնողներին,
Թող չ'խնդացնէ թշնամիներին,
Գերեզման կը լինիմ ճանապարհներին,
Գտայ հայրս, միայն սիրելիս կորաւ։

Երբոր վերադարձայ Սասուն Սախալից,
Սար ու ձոր թնդում էին լաց աղաղակից,
Ասաց.—ի՞նչ լուր ունիս իմ գերդաստանից—
—Գտայ հայրս, միայն սիրելիս կորաւ։

Երգից յետոյ Սուրէնը մի նամակ գրեց տանեցոց և նկարագրեց իւր զլխին պատահածները, վընքեց նամակը և յանձնեց Ռուբէնին, որը մնաս բարով ասելով գնաց հայրենիք, իսկ ճանապարհորդները շարունակեցին իրանց ճանապարհը։ Արաբօն ասաց.—«Սուրէն եղբայր, ես կարծում եմ որ իմ

գալս լաւ չի լինի, գուցէ Թէմուր խանը ուրիշ բան կարծէ իմ ձեզ հետ լինելու մասին, ուրեմն աւելի լաւ կ'լինի, որ ես այստեղից գնամ Էջմիածին, մինչև որ դուք էլ կ'գաք». Սուրէնը չմերժեց նրա խօսքը և Արաբօն ճանապարհ ընկաւ և հասնելով այնտեղ հիւր եղաւ Ղամազեան Ղևոնդի տունը։ Իսկ Սուրէնը և Ազատը եկան Մագու, գնացին Թէմուր խանի տունը, ներս մտան, բարև տուին և կանգնեցին. Խանը նրանց բարևը ընդունելով՝ տեղ ցոյց տուեց նստելու, և քիչ յետոյ հարցրեց որտեղացի լինելը, պատասխան ստացաւ որ Սասունցի են, յետոյ Ազատուն ասաց.—„ես տեսնում եմ, որ դու աշուղ ես, ուրեմն մի երգ ասա լսեմ»։ Ազատը մտածեց մի այնպիսի երգ ասել, որ Սիրանոյշ անունը տողերի վերջում յիշէ, առաւ սազը և սկսեց երգել այսպէս։—

Բեղ պատմեմ Սասունի անցքերը բոլոր,
Կարծեմ ձեզ է եկել մեր Սիրանոյշը,
Աղաղակից թնդացել են սար ու ձոր,
Զարաչար քաշում է սէր Սիրանոյշը։

Որբ է մնացել մեր խղճալի Սասուն,
Կոտորուել են էրիկ, կնիկ, անասուն,
Այրուած գիւղերի թիւն է քառասուն,
Անտուած սիրես, այստեղ բէր Սիրանոյշը։

Ծաւալել են սար ու դաշտ քիւրդերը,
Անգթաբար այրել են այգիները,
Վարդերից զատել են խեղճ սոխակները,
Այսպէս բան դեռ տեսած չէր Սիրանոյշը։

Եկեղեցիները քրդին յանձնուած,
Բոլոր զարդ ու զարդարանքը կողոպտուած,
Հրաշալի պատկերները այրուած,
Ազատուս սիրելին ձեր Սիրանոյշը։

«Ազատու սիրելին, ձեր Սիրանոյշը» բառերը արտասանած ժամանակ. Մշեցի գաղթականներ կային այնտեղ, իսկոյն հասկացան երգի միտքը և սկսեցին մրմնջալ միմիանց հետ. խանը ասաց.» որդիս, հէնց մենք էլ քո գալուդ էինք սպասում»։ Լուրը հասաւ Սիրանոյշին, որը իսկոյն վազեց դէպի Խանի սենեակը. Խանը իմանալով նորա գալը՝ իսկոյն արգելեց երևան ելնել, և հրամայեց գիւղից եռեսուն երիտասարդներ բերել տուեց մի տարազով, նոյն ձևով և Ազատուն հագցրեց. խումբը երկու մասի բաժանեց և մինը առանձնացրեց, որի մէջն էր Ազատը, իսկ միւս մասը կանգնեցրեց և Սիրանոյշին կանչելով ասաց.—„աղջիկս տես սրանցից ո՞րն է քո սիրելին». Սիրանոյշը մէկ մէկ նայելով պատասխանեց «և ոչ մէկը» յետոյ առաջ բերեց միւս խումբը, որի մէջն էր Ազատը, որը

կասկածելով որ մի գուցէ չճանաչէ Սիրանոյշը, որովհետև այժմ մօրուսով էր, Սիրանոյշի թաշկինակը որը ընծայ էր իր մօտը, քաշ արեց իր գոտկիցը և այնպէս ներս մտաւ։ Սիրանոյշը հերթով նայելով եկաւ Ազատու հանդէպը և սկսեց ուշի ուշով նայել, Ազատը յօրանջեց, իր առաջին ատամներից երկուսը ընկել էին, Սիրանոյշը յանկարծ նկատեց իր թաշկինակը, որի վերայ գրուած էր իւր անունը, իսկոյն դարձաւ դէպի Խանը և ասաց.— „ահա՛, տէր իմ, սա է իմ սիրելին»։ Խանը շատ ուրախացաւ և ասաց.—«իմ միակ որդուս մահուանից յետոյ ես ուրախութիւն չեմ վայելել, բայց այժմ իմ խոստման համեմատ ձեզ մի լաւ հարսանիք կանեմ և մենք էլ կուրախանանք»։ Սուրէնը առաջ գալով ասաց։—«յարգելի Խան, ահա երկու տարի է, որ մեր ծնողքը մեզ են սպասում, թէ ինչ հանգամանքներ կային բոլորը Ձեզ առաջուց արդէն պատմել ենք, ուրեմն՝ խնդրում եմ թոյլ տուէք գնանք մեր տունը կատարենք հարսանիքը և թշուառ մերայնոց ուրախացնենք»։ Մինչդեռ այսպէս Խանը և Սուրէնը միմիանց հետ խօսում էին՝ Ազատը յարմար առիթ գտաւ և երկու երիտասարդի հետ դուրս գնաց սենեակից. երիտասարդները նորան տարան այն պարտէզը, որը Թէմուր Խանը տուել էր Սիրանոյշին։ Ազատը մտաւ պարտէզ այն ժամանակ՝ երբ Սիրանոյշը աղախինների հետ

դուրս էին գալիս իր սենեակի դռնից։ Սիրանոյշը երիտասարդներին որ տեսաւ ամաչեց և անցկենալով միւս դռնից ներս մտաւ և գալով պատուհանի առաջը սկսեց նայել դէպի Ազատին, Ազատը այս տեսնելով՝ սիրտը կրակ լցուեց, էլ չկարողացաւ համբերել, սազը առաւ և սկսեց երգել այսպէս.—

Արևի արփենիկ, գեղեցիկ սիրուն,
Ինչո՞ւ իմ երեսիս աշելով անցար,
Գարնանային նոր բացուած ծաղիկ սիրուն,
Հոտովդ արբեցայ, մաշելով անցար։

Կուզեմ որ փաթաթուիմ քո պարանոցդ,
Քաղցր ծաղիկներ կան պատած քո ծոցդ,
Այրես ու կրակէց ինձի քո բոցդ,
Կեանքիս տերևները խաշելով անցար։

Ընդունիր այս գիշեր ինձի հիւր քեզի,
Քաղցր շրթունքներով տամ համբոյր քեզի.
Ծաղկեալ բուրաստան ես, լինիմ ջուր քեզի,
Վարդի պէս սոխակին քաշելով անցար։

Պատասխան տուր ինձի, ով իմ սերելիս,
Փափագս լրանալ կուզեմ Ազատիս,
Դժուար եկայ, մթթէ երես կոլորես,
Կարատեցիր սիրտս, տաշելով անցար։

Ազատու ընկերները նկատեցին, որ նա ցանկանում է գնալ Սիրանոյշի մօտը, նրանք հեռացան պարտիզից, Ազատը գնաց դէպի Սիրանոյշի սենեակը. Սիրանոյշը Ազատու գալը տեսնելով սենեակի միւս դռնովը գնաց պարտիզից ծաղիկների փունջ կապելու. երբոր Ազատը ներս մտաւ և Սիրանոյշին սենեակում չգտաւ, երեսի գոյնը թռաւ և մտքումը ասաց.—«անպատճառ Սիրանոյշը ինձանից զատ մի առանձին սիրեկան է ճարել, որ միշտ այսպէս փախչում է ինձանից»։

Մէկ էլ պատուհանից դուրս նայեց, տեսաւ որ նա ծաղկի փունջը ձեռքին բռնած գալիս է, ուրախութիւնից սազը առնելով ձեռքը սկսեց երգել այսպէս.—

Ճշմարիտ սիրուդ փափագ եմ, ով դու աննման սիրուն,
Շատ տեղեր ման եկայ, բայց չտեսայ քեզ նման սիրուն.
Սիրուհիների միջում ես դու ինչպէս վարդը փուշի մէջ.
Ուրեմն ինձի ես արժան, արի, հոգի ջան սիրուն։

Սէրդ ինձի դառել է կրակի կայծ ու այրում է,
Ես սոխակ եմ, դու ծաղկով զարդարուած բուրաստան սիրուն.

Մազերդ քամին կշարժէ ինչպէս վարդի տերևը,
Մի զատէ քեզնից սոխակին, եղիր վարդարան սի-
բուն։

Բաւ է ինձ այնտեղ չարչարես, արի մօտս, սի-
րելի,
Միշտ քո մասին ես արել եմ լաց ու կոծ սիրուն,
Կաքաւի պէս ման ես գալիս պարտիզի մէջ լոյս
տալով,
Տեսայ պայծառ աստղմ լոյս կըտայ Պարսկաստան
սիրուն։

Ազատը երբոր այս երգը վերջացրեց, Սիրանոյշը
ներս մտաւ, վազեցին միմիանց ընդ առաջ և փա-
թաթուելով սկսեցին համբոյրուել, յետոյ նստելով
սկսեցին խօսել. մութը ընկած լինելով՝ Ազատը
այդտեղ գիշերեց։ Առաւօտեան Խանը ծառային
ուղարկեց երկուսին էլ կանչեց իւր մօտ. նրանք
եկան և գլուխ տալով կանգնեցին։ Խանը ասաց Ա-
զատուն. «որդիս, ես քու սիրուհիդ պահեցի ինչ-
պէս իմ աղջիկս, մինչև քո գալդ, ուրեմն՝ ահա
տալիս եմ քեզ նրան, գնացէք անտրտում ապրեցէք
աշխարհում, մինչև խորին ծերութիւն»։ Նրանք
մօտեցան Խանի ձեռքը համբուրեցին, անսահման
երախտագիտութիւն արտայայտելով։ Խանը նրանց
մի մի նժոյգ ձի ընծայեց, պատրաստեցին ձիերը

Սուրէնը շնորհակալութիւն տալով Սիրանոյշի հետ
դուրս գնաց, իսկ Ազատը մնալով ներս, սազը ա-
ռաւ և սկսեց երգել հետևեալ շնորհակալութեան
երգը։—

Գովեմ, գովելի Թէմուր Խան,
Շնորհակալ եմ քեզանից,
Մագուլումն ես մի հատ իշխան,
Ես որ գոհ կերթամ քեզանից,

Յաւիտեան հաստատ մնաս,
Բարի համբաւներ ունենաս,
Խնդրեմ վատ օրեր չտեսնաս,
Ստացայ նոր կեանք քեզանից։

Աստուած մէկ որդի տայ քեզի,
Որ տրտում չթողիր մեզի,
Զօրեղ է Աստուածը հեզի,
Կը վերանայ սուգ քեզանից։

Երգից յետոյ մօտեցաւ ձեռքը համբուրեց, մնաս
բարով ասելով դուրս եկաւ, հեծան ձիերը և միա-
սին ճանապարհ ընկան դէպի սուրբ Էջմիածին.
այնտեղ հասնելուն պէս Ազատը գնաց վեհարան,
ճանապարհին պատահեց Արաբոին և միասին մտան
Հայրիկի մօտ. Հայրիկը առաջ կանչեց, եկան աջը
համբուրեցին ծնկաչոք և կանգնեցին, և խօսելու-

հրաման տանալով՝ Ազատը առաջ գալով խոնարհաբար գլուխ տալով ասաց.—«Վեհափառ Տէր իմ, Սասունցի մի գաղթական աղջիկ եմ բերել, որին կոտորածի ժամանակ այս ընկերս ազատել էր և Պարսկաստանի Մագուայ խանութեան մէջ էր փախցրել, այժմ կամենում եմ հետը պսակուել, վասնզրոյ խոնարհաբար խնդրում եմ ամենաողորմած կարգադրութիւն անէք, հրամայէք իմ ծխատէր քահանային, որ պսակէ մեզ առանց արգելքի»։ Հայրիկը հրամայեց Սիրանոյշին բերել իր մօտ, իսկոյն շաթբրները (ծառաները) գնացին բերին. եկաւ Սիրանոյշը ծնկաչոք համբուրեց Հայրիկի ոտքերը. Հայրիկը հրամայեց վեր ելնել և հարցրեց-«աղջիկս, դու կամա՞ւ ես եկել սրանց հետ թէ՝ ակամայ քեզ փախցրել են»։ Սիրանոյշը խոնարհաբար գլուխը վայր ձգելով ասաց «կամաւ»։ Երբ որ համոզուեց Հայրիկը որ Ազատու ասածը ճշմարիտ է, հրաման տուեց նրա ծխատէր քահանայի վերայ, որի անունը Ներսէս էր, օրհնեց երեքին էլ և ճանապարհ ձգեց։ Երեքը միասին համբուրելով Վեհափառ Հայրիկի սուրբ աչը, դուրս եկան դահլիճից։ Ազատը ուրախութիւնից չգիտէր ինչ անէր, Վեհարանի դուռը եպիսկոպոսներ ու վարդապետներ կային կանգնած, նրանք տեսան որ Ազատու գործերը յաջող գընաց, նրան ասացին—«Այ աշուղ, գործդ լաւ եղաւ։

ուրեմն մի երգ ասա՛, յետոյ գնա։» Ազատն էլ հէնց այդ կուզէր. իսկոյն սազը լարեց և սկսեց երգել այսպէս.—

Էլ Քեզ գովեմ, Հայր Վեհափառ, Դու ես Հայ ազգի ճրագ,
Լոյս ես տալիս ազգերի մէջ ինչպէս մէկ նոր արեգակ,
Ուսում ունիս Եւրոպական, ջանա՛ որ մենք հասանինք,
Մենք էլ քեզնով շատ ուրախ ենք, որպէս պարծանաց պսակ։

Գանձդ ժողովէ բարիքներով, որ լինիս բարեաց տէրը։
Ազգիդ օգտին մա՛ն արի, մի՛ կտրի նորանց սէրը.
Աշխատիր, Հայրիկ, աշխատիր վառիր անցած մոմերը,
Ուսմամբ ջանա՛ գառնուկներիդ լինել հարազատ մշակ։

Խեղճ Ազատու այրուած սրտին կրակ վառիր, Վեհափառ.
Մեսրովպայ թարգմանչի նման խրատ առիր Վեհափառ,
Քաջ ընկերներ շատ ժողովէ, Հովիւ դառիր, Վեհափառ,

Արիւնդ զոհէ հայերին, որ ծաղկէ զերթ մանուշակ։

Երգը վերջացնելուց յետոյ շնորհակալութիւն յայտնելով՝ եկան ձիերը հեծան և չորսը միասին ճանապարհ ընկան դէպի Շիրակ. ճանապարհին իջան Սօկութլի գիւղը, որտեղ է Ս. Գրիգոր Լուսաւորչի հրաշալի աղբիւրը. գնացին այդ աղբիւրը, անմահական ջրից խմեցին, այնտեղի մատուռն ուխտարին և դուրս գալիս՝ այնտեղ կոյր աղքատներ կային, նրանց էլ մի մի ոսկի տալով՝ բարեմաղթութիւն ստանալով՝ կոմեցան մեկնել՝ Ազատին ասաց. «Մի երգ էլ ասեմ՝ նոր գնանք,» ու սկսեց այսպէս երգել.—

Անմահական ջուր ես, սպիտակ աղբիւր,
Քո մօտդ գալողը չի ուզում երթայ,
Մէկ ժամի չափ մենք էլ եղանք հիւր,
Քո հոտդ առնողը չի ուզում երթայ։

Մեծ մեծ գետակների դու ես գլուխը,
Լիանում է քեզի գալող ամբոխը,
Ողորմութեան համար նստած խնդրողը,
Քո հոտդ կոխողը չի ուզում երթայ։

Օրհնած է քո բոյսդ, անմահական ես,
Անցնող դարձողներին դու սիրական ես,

Բոլոր ջրերի մէջը գովական ես,
Քո բոյսդ տեսնողը չի ուզում երթայ։

Երգը վերջացնելուց յետոյ ճանապարհ ընկան, եկան Պարնի գիւղը, դեռ Հայր-Յարթիկ չ'հասած՝ ճանապարհին զառի վայրի տափարակում մի աւերակ վանք կար, այնտեղ իջան քիչ հանգստանալու. այդ ժամանակ մի տղայ եկաւ նրանց մօտ, Սուրէնը հանեց մի ոսկի տուեց նրան և ասաց.—«Դնա՛ Եղիշէի տունը, Եղիշէին աչքալոյս տուր և ասա՛ քո որդիքդ գալիս են»։ Երեխան ուրախ ուրախ վազեց դէպի տուն։

Ազատը դառնալով Սուրէնին ասաց.—«Հայրիկ ջան, տեսնում ես հայրենիքի նշանակութիւնը, ինչ թւում է իբր նրա տխրութիւնը փարատուեց. հէնց մեր գալուն էր սպասում. ահա բուրում են հրաշալի ծաղիկները իրանց հոտերը և արբեցնում են մարդի.» ասաց և սաղը ձեռքն առնելով՝ երգեց այս երգը.—

Ա՜խ հայրենիք, ջան հայրենիք,
Բաւ է տրտմիս, ուրախացիր.
Թող պատառուեն քո թշնամիք,
Բաւ է տրտմիս, ուրախացիր։

Նոր ծաղկեցան պարտէզները,
Ուր երգում են սոխակները,

Ահա եկաւ ձեր քաջ տէրը,
Բաւ է տրտմիս, ուրախացէք։

Շատ ժամանակ է տխուր ես,
Արդեօք հիմա ծիծաղում ես,
Ոտքի կանգնի, թէ ուզում ես,
Բաւ է տրտմիս, ուրախացէք։

Դէ՛, աւետիս տո՛ւր իմ պապիս,
Այսօր խաւարիցն ելաւ լիս՝,
Այժմ ուրախ է Ազատիս,
Բաւ է տրտմիս, ուրախացէք։

Այս երգից յետոյ նստեցին ձիերը և իջան դէպի գիւղը, տեսան մի խումբ ձիաւոր է գալիս. այդ խումբն էին Եղիշէն և իւր ազգականները, որոնք միմիանց հանդիպելով՝ իսկոյն վայր իջան ձիերից, և սկսեցին իրար ողջունել, փաթաթուիլ, գրկախառնուել և ջերմաջերմ համբոյրներ մատուցանել միմիանց, յետոյ հեծան ձիերը և գնացին մտան գիւղը, երբոր հասան իրանց դուռը՝ Ազատու մայրը վազեց, համբուրեց իր որդու երեսը և ապա վազեց գրկեց Սիրանոյշին, համբուրեց և ներս տարաւ. նոյնպէս հրաւիրուեցան ներս բոլոր ներկայ եղող ձիաւորները։ Եղիշէն մեծ բազմութիւն հրաւիրեց և ահագին պատրաստութիւն տեսաւ հարսանեաց համար, զանազան տեսակ նուագարաններ բերել տրուեց և զարմանալի հանդիսով Ազատուն և Սիրանոյշին տարան պսակ սուրբ Յարութեան եկեղեցին. խաչ-քաւորը եղաւ քաջ Արաքօն. պսակը երբ տուն վերադարձաւ, հարսնեւորները բազմեցին պատրաստուած ճոխ սեղանի շուրջը և սկսեցին կեր ու խում անել, բարեմաղթութիւններ անել նորապսակեալների համար. այլ և այլ կենացներ առաջարկել, երգել, պարել և այլն։ Ուրախութեան տաք ժամանակը հանդիսականները խնդրեցին Ազատուն մի ուրախ երգ երգել։ Ազատը առաւ սաղը և երգեց այս ուրախ երգը։

Բոլորիդ աչքն էլ լոյս, իմ ազգականներ,
Ողջ և առողջ եկան ձեր որդիները,
Խաղացէք, խնդացէք, քոյրեր, մայրիկներ,
Ողջ և առողջ եկան ձեր որդիները։

Ծափ տուէք, ծիծաղ արէք բարձր ձայնով,
Սեղաններ պատրաստէք լի կարմիր գինով,
Համբոյրներ առէք դուք իրարից սիրով,
Ողջ և առողջ եկան ձեր որդիները։

Ազատը իր բաղձանքները կատարեց,
Գերի հօրը գերութիւնից ազատեց,
Տխուր բարեկամաց ուրախացրեց,
Ողջ և առողջ եկան ձեր որդիները։

CHICAGO PUBLIC LIBRARY

Երգը վերջացնելուց յետոյ բոլոր հանդիսականները ոտքի կանգնեցին և կենաց բաժակ խմեցին նորապսակեալների համար. այդ օրուանից հարսանիքը տևեց քառասուն օր քառասուն գիշեր. ուտելիքին և խմիչքին թիւ ու համար չկար. Հայաստանի գինին հեղեղի նման հոսում էր, յետոյ մի մի բերան էլ հարսնեւորները կեանք և բաղդաւորութիւն բարեմաղթեցին և ցրուեցան։ Պատեց գիշերային խաւարը. Ազատը գնաց Սիրանոյշի մօտ, երբ մօտեցաւ դրանը՝ խփեց, բայց Սիրանոյշը բաց չարեց և ասաց.—«Մինչև ինձ երգով չգովես՝ դուռը բաց չեմ անի. Ազատը առաւ սազը և երգեց հետևեալ գովեստի երգը.—

Գովաբանեմ քեզի, անուշ սիրելի,
Վառվռուն աչքերդ կանթեղի նման,
Վախում եմ թէ սէրդ իմ սիրտս վառի,
Չի հանգչում, ծխում է անթեղի նման։

Ով սիրուն, նման ես գեղեցիկ արան.
Մէկ հատ է քո բերբդ, ադնիւ սիրական,
Սոխակին մի զատէ, եղիր վարդարան,
Քաղցրախօս լեզուդ համեղի նման։

Ազատը վառվում է քո սիրուդ համար,
Թշերդ կարմրիկ, ունքերդ կամար,

Յանկարծ քեզ տեսնողը կեղնի նետահար,
Կը ցցուէ սրտի մէջ աղեղի նման։

Երգից յետոյ Սիրանոյշը դուռը բացեց, ներս ընդունեց Ազատուն և երկուսը միասին մտան երջանկութեան գիրկը. ապրեցին խաղաղ ու բաղդաւոր կեանքով, մինչև իրանց խորին ծերութիւնը։

ՎԵՐՋ

Հանրային Գրադարան
Публичная Библиотека
7/XI—1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎՐԻՊԱԿ	Եր.	ՈՒՂԻՂ
Դեռահաս է	23	Դեռահաս
Ազատ	28	Ազատի
Տկար	„	Տխուր
Ազատ	„	Ազատի
Ազատ	„	Ազատի
Մրուր	„	Մուր
Ազատ	„	Ազատի
Գետից	32	Գետիցը
Ազատ	40	Ազատի
Այդ	48	ադ
Սիպտակ	53	Սպիտակ
Սար արաց	53	Սուր արած
Ինչ է կհարցանես . .	57	Ինչ կ՝հարցնես
Սիպտակ ու . . .	58	Սպիտակ
Ցերեկի	„	Ցերակի
Հայրդ կազատենք .	61	Կազատենք հայրդ
Լեզուից	66	Լիզուիցը
Պատուից	66	Պատուիցը
Խեղճուկ Ազատուն—	66	Խեղճուկ Ազատու անձը
հահուան	68	Մահուան
Բոցը	70	Խոցը
Որ չուրախանայ . .	77	Որ չը ուրախանայ
Մի վախիլ Ազատ . .	81	Մի՝ վախիլ, ով Ազատ
զատէ	86	Ազատի

ПИСКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

0008016

13326
2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0008016